

Գևորգ Ս. Խուդինյան  
Պատմ. գիտ. դոկտոր

«Ես այն ժամանակ ասացի, որ Մուհամմեդ մարգարեն դիմել է Տիրոջը հետևյալ խոսքերով՝ «Օ՛ր Ամենաբարձյալ, մի՛ տուր քրդերին սեփական պետությունը ստեղծելու հնարավորություն, որովհետև եթե քրդերը պետություն ձեռք բերեն, նրանք այնքան կբազմանան, որ երկրի վրա նեղվածք կլինի»»<sup>1</sup>:

Աբդուլլահ Օջալան

## ՔՐԴԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝

Աբդուլլահ Օջալանի երկերի հինգ հատորներում\*

**Բանալի բառեր** – Աբդուլլահ Օջալան, պաշտպանական ճառ, քաղաքակրթություն, կապիտալիզմ, դեմոկրատական հասարակություն, դեմոկրատական ազգ, Միացյալ և անկախ Քրդստան, Դեմոկրատական կոնֆեդերատիվ Քրդստան, Վ. Վիլսոնի Իրավարար վճիռ:

### Մուտք

Թուրքական դատարանի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված Աբդուլլահ Օջալանը 2010 թ. դեկտեմբերի 22-ին Իմրալի կղզու իր բանտախցից նամակ էր գրել Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ հայտնելով եվրոպացի իրավապաշտպաններին, որ ավարտել է իր հինգ հատորանոց **պաշտպանական ճառի** վերջին հատորը:

Նրանում քուրդ առաջնորդը նպատակ ունի «հստակություն մտցնելու պատմության մեջ»<sup>2</sup> և ուշադրություն հրավիրել այն անարդարությունների

\* Հղվածն ընդունվել է տպագրության 4.09.2017:

<sup>1</sup> Մենք պատահաբար չենք մեջբերում թուրք ձախակողմյան-ընդհանրիրների միջավայրում ժամանակին Ա.Օջալանի հնչեցրած այս **սրամտությունը**, քանզի այն նոր իմաստ է ստացել ներկա իրողությունների համատեքստում: Տե՛ս **Абдулла Оджалан**. Курдская проблема и решение модели демократической нации.

Кн. 5, М. 2015, էջ 395.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 830:

վրա, որոնք իրականացվել ու իրականացվում են իր և իր ժողովրդի հանդեպ, ինչի հետևանքով քրդերը դատապարտվում են պատմության աննախնդրում սոցալցվելու նույն վիճակին, ինչպես ոչ հեռավոր անցյալում հայերը, հույներն ու ասորիները:

Արտաքուստ միայն որպես պաշտպանական ճառի ընդարձակ հիմնավորումներ շարադրված Ա. Օջալանի սովարածավալ հատորներն իրականում մեր հարավային հարևան քրդերի քաղաքական ձգտումների ու ներկա կացության ամբողջական պատկերը ներկայացնող ուսումնասիրություններ են, որոնք արտացոլում են նրանց հեղինակավոր առաջնորդի տեսակետներն ու գնահատականները ոչ միայն իր ժողովրդի ու նրա հարևանների անցյալի ու ներկայի, այլև համաշխարհային պատմագիտական ու փիլիսոփայական մտքի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, ուստիև չեն կարող չհետաքրքրել հայ ընթերցողին:

Ու թեև Ա. Օջալանը իր աշխատությունների վերջին՝ 5-րդ հատորը Ստրասբուրգ է ուղարկել դեռևս ձեռագիր վիճակում, բայց քիչ անց՝ 2011-2015 թվականների ընթացքում, դրանք թարգմանաբար լույս են տեսել Մոսկվայում: Այդ ծավալուն գործերի թարգմանությունը թուրքերենից ռուսերենի իրականացվել է մեր հայրենակից **Յակով Բալայանի** կողմից, խմբագիրն է **Մամեդ Մուստաֆանը**, հրատարակիչը՝ Ռուսաստանի Դաշնությունում գործող «**Քրդերի ֆեդերալ ազգային-մշակութային ինքնավարություն**» կազմակերպությունը:

Սեփական պետականությունն ունեցող մեր հարևանների գրավոր մշակույթին ծանոթանալու, ինչպես նաև հայ թուրքագետների, իրանագետների, վրացագետների, իսկ վերջին շրջանում՝ անգամ ադրբեջանագետների աշխատանքներն ընթերցելու միջոցով, մենք կարողացել ենք նրանց մասին կուտակել գիտելիքների որոշակի պաշար: Բայց քրդերի վերաբերյալ մեր պատկերացումները, դժբախտաբար, մնացել են 20-րդ դարասկզբի մակարդակին, որոնց գումարված խորհրդային մտակաղապարները էական փոփոխություն չեն մտցրել այդ ավանդական ընկալումների մեջ: Մինչդեռ անցած տասնամյակներին ժողովրդագրական պայթյուն արձանագրած բազմամիլիոնանոց քուրդ ժողովուրդը, հայտնվելով Իրաքում իր ունեցած ինքնավարությունն անկախության վերածելու խնդրի առջև, օբյեկտիվորեն դարձել է տարածաշրջանում սկիզբ առնող աշխարհաքաղաքական վերաձևումների հիմնական շարժիչը: Ուրեմն անկախ նրանից, թե մեզանից յուրաքանչյուրն ինչպիսի պատմական հիշողություն ունի քրդերի մասին, մենք պարտավոր ենք ձևավորել ոչ միայն գիտելիքների անհրաժեշտ պաշար, այլև որոշակի հայեցակարգ հայ-քրդական հարաբերությունների անցյալի, ներկայի ու ապագայի վերաբերյալ: Իսկ այդ նպատակն իրականություն դարձնելու համար նախ և առաջ հարկ է ծանոթանալ քրդական շրջանակներում եթե ոչ Սուրբ գիրք, ապա գոնե քաղաքական ուղեցույց հանդիսացող Ա. Օջալանի<sup>3</sup> աշխատություններին:

3 **Աբդուլլահ Օջալանը** ծնվել է 1949 թ. ապրիլի 4-ին Ուրֆայի (Ուռհա, Եդեսիա, այժմ՝ Շանլիուրֆա) Օմերի գյուղում, որը Նոր Հռոմկլայից 21 կմ հեռավորության վրա գտնվող պատմական Ամարա բնակավայրն է: Ավարտել է թուրքական լիցեյը և ապա սովորել է սկզբում Ստամբուլի, իսկ 1971-1974 թթ. Անկարայի համալսարանում՝ ուսանելով քաղաքագիտություն, բայց այն չի հասցրել ավարտել քաղաքական պայքարի մեջ մտնելու պատճառով: Հարել է 1970-ականներին Թուրքիայում ոչ առանց խորհրդային աջակցության ի հայտ եկած ձախակողմյան-մարքսիստական խմբակներին, իսկ 1978

Իր ձերբակալությունից հետո քուրդ առաջնորդը սեփական բանտա-խուցն աստիճանաբար վերածել է յուրահատուկ հետազոտական լաբորատորիայի՝ ստանալով ու ընթերցելով հսկայական քանակությամբ գրականություն: Դրանք հիմնականում պատմագիտական, փիլիսոփայական, մասամբ քաղաքագիտական բնույթի աշխատություններ են, որոնք ներառում են վերջին երկու դարերում լույս տեսած դասական գործերից շատերը: Ա. Օջալանի աշխատություններում բազմիցս հղումներ են արվում ոչ միայն Կ. Մարքսի ու Վ. Լենինի գործերին, այլև համաշխարհային պատմագիտության, սոցիալական փիլիսոփայության ու հնագիտության այնպիսի դասականների երկերին, ինչպիսիք են Լ. Ռանկեն, Օ. Կոնտը, Է. Դյուրկհայմը, Ֆ. Բրոդելը, Մ. Ֆուկոն, Է. Վալլերսթայնը, Գորդոն Չայլդը և ուրիշներ:

Ուշադրությամբ ընթերցելով Ա. Օջալանի հատորները՝ անմիջապես արձանագրում ենք դրանց տրված կրկնակի վերնագրերի միջոցով հեղինակի հետապնդած երկակի նպատակը, այսինքն՝ քաղաքական որոշակի առաջադրանքը գիտական կատեգորիաներով հիմնավորելու ձգումը: Այդպիսին է նրա հատորներից հենց առաջինը, որի կազմի վերևի մասում գրված է **«Կապիտալիստական մոդեռնիզմի հաղթահարման պրոբլեմներն ու ժողովրդավարացումը»**, իսկ ներքևում ավելացված է երկրորդ, իր բնույթով գիտահետազոտական թեման՝ **«Քաղաքակրթություն: Դիմակավոր աստվածությունների և քողարկված արքաների ժամանակը»**: Իսկ ահա մյուս բոլոր հատորների վերնագրերն ուղեկցվում են **«Դեմոկրատական հասարակության մանիֆեստը»** ենթավերնագրով: Նման մոտեցումները, անշուշտ, որոշակի քաղաքագիտական երանգավորում են հաղորդում Ա. Օջալանի ուսումնասիրությանը, սակայն դրանով ամենևին էլ չեն իջեցնում հեղինակի հիմնավորումների մակարդակը:

Ի դեմս Ա. Օջալանի հատորների՝ մենք գործ ունենք սեփական ինքնության ընկալման եվրոպական մակարդակին ձգտող առանձին ազգերի քաղաքական առաջնորդների ջանքերով կամ նրանց անունից երբևէ հրապարակված լուրջ տեքստերից մեկի հետ: Այս առումով համեմատության կարգով թերևս կարելի է վերհիշել արդեն հանգուցյալ Սափարուրադ Նիյազով-Թուրքմենբաշիի նշանավոր «Ռուսիանեն»<sup>4</sup>, որը կազմվել է ոչ առանց այլազգի գիտնականների աջակցության: Բայց Ա. Օջալանի գիտելիքների խորությունն ու ազգային խնդիրներին համամարդկային լուծումներ փնտրելու նպատակ ունեցող տեսաբանի ու գիտնականի հարցադրումների հիմնավորվածությունը անհամեմատ ավելի բարձր են սեփական երդիկից

թ. նոյեմբերի 26–27-ին Դիարբեքրի Ֆիս գյուղում կազմակերպել է Քրդստանի Բանվորական կուսակցության հիմնադիր համագումարը՝ դառնալով քուրդ ժողովրդի նորագույն շրջանի զինյալ պայքարի առաջնորդն ու գաղափարախոսը: 1984 թվականից մարտական գործողություններ է սկսել Թուրքիայի արևելյան նահանգներում՝ «Միացյալ և անկախ Կրդստան» կարգախոսով: Մինչև 1998 թվականը վայելելով Սիրիայի առաջնորդ Հաֆեզ Ասադի հովանավորությունը՝ բնակվել է այդ երկրում, այնուհետև Ռուսաստանում, որտեղ չստանալով քաղաքական ապաստան՝ դեգերել է Հունաստանում, Իտալիայում և ի վերջո 1999 թ. փետրվարի 15-ին Քենիայի մայրաքաղաքում առևանգվել է Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից: Թուրքական դատարանը նրան դատապարտել է մահվան, ինչը եվրոպական կառույցների ճնշման տակ փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ՝ Մարմարա ծովի Իմրալի կղզու բանտում:

4 Այդ մասին ավելի մանրամասն տես Գ. Խ., Թուրքերը, թուրքերը և մենք: «Թուրքական աշխարհ, Կովկաս և Իրան-քաղաքակրթական փոխգործակցության խաչմերուկ» միջազգային գիտաժողովի մասին, «ՎԷՎ», 2009, N 2, էջ 118–124:

այն կողմ չնայող մեր տարածաշրջանի պետական ու քաղաքական առաջնորդների դատողությունների ընդհանուր մակարդակից: Ակնհայտ է, որ ինտելեկտուալ առումով հսկայական առաջընթաց արձանագրած երեկվա վրանաբնակ քրդերի առաջնորդը համաշխարհային գիտության նվաճումներից շատերին լավատեղյակ գիտնական է ու միևնույն ժամանակ՝ համաշխարհային քաղաքականության հետնախորքում ծավալվող գործընթացներին քաջածանոթ քաղաքական գործիչ: Այսինքն՝ և՛ քննական-վերլուծական առումով, և՛ համաշխարհային պատմության ու փիլիսոփայական մտքի իմացությամբ, Ա. Օջալանի աշխատությունները ազգային ինքնագիտակցության բյուրեղացման նախնական հանգրվանին բնորոշ պատկերացումներից հասարակական երևույթների գիտական ընկալմանն անցնելու փորձեր են: Ուստի կարելի է չհամաձայնել նրա հարցադրումներից շատերի հետ, կարելի է հակասություններ գտնել նրա տեսադրույթների և ոչ վաղ անցյալի քաղաքական գործունեության միջև, բայց չի կարելի չարձանագրել այն իրողությունը, որ ի դեմս Ա. Օջալանի մենք գործունենք մեր ժամանակի ամենաինտելեկտուալ քաղաքական գործիչներից մեկի հետ:

Ընթերցելով Ա. Օջալանի հատորները՝ անմիջապես վերհիշում ենք 19-րդ դարի մեր ազգային Ջարթոնքին հաջորդած՝ հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի շրջանը, որը մեզ նույնպես տվեց ճշմարտության ու արդարության համամարդկային իդեալներին հետամուտ, լայն մտահորիզոնի տեր փայլուն առաջնորդների մի ամբողջ փաղանգ, վերհիշում ենք գերմանացի մեծ փիլիսոփա Է. Կանտի մտքի խորությամբ տարված Քր. Միքայելյանի, ականավոր պատմագետ Թ. Կարլայլի գաղափարների հետևորդ Ս. Ջավարյանի և ուրիշ նվիրյալների անունները և համեմատելով մեր ներկա **հոգեմտավոր ինքնամսխումի** գործընթացի հետ՝ խորապես համոզվում, որ ոչ մի խոչընդոտ, ոչ մի արգելապատնեշ ի գորու չէ կասեցնելու մարդկության նորացման անկասելի ընթացքը, որի մեջ ներառվելու արդյունքում երեկվա վրանաբնակ քրդերն այսօր կարողացել են մուտք գործել համաշխարհային քաղաքականության բեմահարթակ: Սա ցույց է տալիս, որ եթե անցյալի փառքի ու մեծության հարմարավետ մահձի մեջ ծուլորեն ննջող մեզ նման ազգերը շարունակեն քմծիծաղով վերաբերվել երեկվա իրենց հետամնաց հարևանների մոտ սկիզբ առած ինտելեկտուալ վերելքին ու պահպանեն հետարդիականության գիտական ու քաղաքական ընկալումների միջև պահպանվող խոր անդունդը, ապա վաղը ոչ միայն չարաչար կերպով կզղջան դրա համար, այլև դուրս կդրվեն պատմության բեմահարթակից:

Չնայած դրան՝ մենք հակված չենք նաև գերագնահատելու Ա. Օջալանի գիտատեսական փնտրտուքի ընդհանուր մակարդակը: Այն դեռևս գտնվում է համաշխարհային մտքի յուրացման նախնական հանգրվանում, ուստիև լի է հակասություններով ու դեպի պատմության խորքերը կատարվող անհիմն էքսկուրսներով: Բայց, դժբախտաբար, մեզանում քաղաքականությունն ու գիտությունն այնքան են մեկուսացել իրարից, որ առաջին ասպարեզում մենք առայժմ չունենք անգամ նման մակարդակի համարձակ էքսկուրսներ:

## 1. Երբ մեթոդը հակասում է տեսությանը

Իր աշխատությունների առաջին հատորի սկզբում՝ հենց առաջին գլխում, առաջադրելով գիտական ճշմարտության որոնման նոր մեթոդով առաջնորդվելու խիստ հավակնոտ նպատակադրումը՝ Ա. Օջալանը, «մեթոդ» ասելով, հասկանում է ոչ միայն գիտական պրպտումների միջոցը կամ գործիքը, այլև այն հիմնավորող տեսությունը: Մեթոդի նման լայն ընկալումն ամենևին էլ նորություն չէ գիտական գրականության մեջ, բայց արդյունավետ է այնքանով, որքանով նրա զույգ բաղադրիչները չեն հակասում մեկը մյուսին: Իսկ Ա. Օջալանը թեև հաջողությամբ սկսել, բայց չի կարողացել իր ավարտին հասցնել նման բարդ խնդրի լուծումը:

Նա կարծում է, որ մարդկության պատմության մեջ ճշմարտության որոնման խնդրի լուծման նախնական մեթոդի դերն են խաղացել **միֆոլոգիական** (դիցաբանական) պատկերացումներն ու հայացքները, որոնց հաջորդել է միաստվածության դարաշրջանը և նրան բնորոշ **կրոնական** կամ **դոգմատիկ** մեթոդը: Հեղինակի կարծիքով՝ դոգմատիկ մեթոդը գերակա է եղել ոչ միայն հիմնական համաշխարհային կրոններում, այլև հին հունական դասական փիլիսոփայության մեջ, որը հիմնվում էր Արիստոտելի ու Պլատոնի մտածողության համակարգերի վրա, որովհետև վերջիններիս հարցադրումներում խիստ սահմանափակ էր ինչպես դիալեկտիկական պատկերացումների, այնպես էլ օբյեկտիվիստական ընկալումների տեղը<sup>5</sup>:

Անշուշտ, այս հարցադրումը որոշ չափով վիճելի է, որովհետև Արիստոտելի ու Պլատոնի փիլիսոփայության՝ միջնադարյան դոգմատիզմի զույգ հենասյուների հիմքը դառնալու իրողությունը չի նույնանում դրանց բովանդակության հետ: Սակայն չի կարելի չհամաձայնել հեղինակի այն եզրահանգման հետ, որ հետագայում դոգմայի վերածված համաշխարհային կրոնների առաջին մարգարեների շնորհիվ են շրջանառության մեջ մտել բարին ու չարը միմյանցից տարբերակող «մետաֆիզիկական բարոյականության ստեղծարար տարրերը»<sup>6</sup>:

Ա. Օջալանը պատահաբար չի առաջադրում ճանաչողության նման ելակետերը, քանի որ իր կողմից առանձնացվող ու սուր քննադատության ենթարկվող Նոր ժամանակներին բնորոշ **գիտական** կամ **օբյեկտիվ** մեթոդի մեջ նա արձանագրում է բարու և չարի հավերժական պայքարը հիմնավորող կատեգորիաների բացակայությունը: Նոր ժամանակներին բնորոշ գիտական պատկերացումների համար Ա. Օջալանն առանցքային է համարում մարդու սուբյեկտիվության և գոյություն ունեցող հասարակության օբյեկտիվության մասին հարցադրումները և դրանց վրա հիմնվող քաղաքացու, ազգի ու պետության հայեցակարգային ընկալումները: Հեղինակի կողմից վերջիններիս նախնական թիրախավորումը նպատակ ունի հիմնավորելու այն կանխադրույթը, որ «կապիտալիստական մոդեռնիզմի» ծնունդ ազգ-պետության գաղափարն է բացել հետագայի բոլոր դժբախտությունների, այդ թվում՝ ցեղասպանությունների ճանապարհը:

5 Sliu **Абдулла Оджалан**. Цивилизация. Эпоха божеств в масках и завуалированных царей. Т. 1, М. 2011, էջ 28:

6 Նույն տեղում:

Դրանով նա փորձում է նաև ցույց տալ, որ «կապիտալիստական մոդեռնիզմի» հիմնավորման համար օգտագործվող Նոր ժամանակների գիտական ճանաչողության մեթոդները ներկայումս նույնպես ծառայում են համաշխարհային կարգի հիմքերի ամրապնդմանը: Որովհետև «Եվրոպայում կապիտալիստական մոդեռնիզմը կարողացել է ապրանքը տեղադրել հասարակության գլխին, իսկ գիտությունը, կրոնը և արվեստը ծառայության են անցել նման հասարակությանը»<sup>7</sup>:

Սակայն ուշագրավն այն է, որ նախկինում օրթոդոքս մարքսիստի համարում ունեցող Ա. Օջալանը ներկա պայմաններում այլևս չի փորձում «կապիտալիստական մոդեռնիզմին» ու ազգ-պետության գաղափարին հակադրել իր հին՝ ձախակողմյան տեսականները: Ժամանակները փոխվել են, և այժմ նա ճշմարտության որոնման իր համառ փորձերն ուղղորդում է դեպի հետարդիականության դարաշրջանի մեծ մտածողների ինտելեկտուալ ջանքերը, «հետարդիականություն, որը մենք կցանկանայինք անվանել ժողովրդավարական մոդեռնիզմ»<sup>8</sup>: Դրա հետ միասին Ա. Օջալանը ստիպված է նաև խոստովանել, որ այդ ջանքերը դեռևս լիովին չեն արդյունավորվել, քանզի հետարդիականության մեծագույն մտածողներից մեկի՝ Է. Վալլերսթայնի խոստովանությամբ՝ «շրջակայքում ամեն ինչ թունավորված է կապիտալիստական համակարգով»<sup>9</sup>: Բայց դա չի նշանակում, որ նա հնարավոր է համարում վերադարձն իր կարծիքով՝ սոցիալիզմի փոխարեն պետական կապիտալիզմ ձևավորած արդարության խորհրդային իդեալին:

Խոստովանենք, որ որպես արդիականության գաղափարաքաղաքական հիմք դիտվող կապիտալիստական մոդեռնիզմի քննադատությունն Ա. Օջալանի կողմից ավելի քան համոզիչ է, թեև նման իդեալին նա հակադրում է ոչ թե ներկայումս գոյություն ունեցող որևէ կոնկետ պետաքաղաքական համակարգ, այլ հետարդիականությանը բնորոշ ժողովրդավարական, բնապահպանական և ազատագրական շարժումներն իբրև **դեմոկրատական արժեքներ**: Դրանց տարածման ընթացքը հունավորելու համար նա անհրաժեշտ է համարում մի կողմ դնել Նոր ժամանակների գիտական ճանաչողության օբյեկտիվիստական ու սուբյեկտիվիստական մեթոդները և առաջնորդվել բարու, գեղեցիկի, ազատության ու ճշմարտության չափանիշներով ղեկավարվող **դեմոկրատական ազգի** քաղաքական իդեալով, որի մեջ կոնֆեդերատիվ հիմունքներով կարող են միավորվել տարբեր ժողովուրդները:

Դժվար է ասել՝ Ա. Օջալանի կողմից ազգ-պետության գաղափարին հակադրվող դեմոկրատական ազգի իդեալը նախատեսված է եվրոպական հանրությանն, թե՛ միայն Թուրքիայի ժողովուրդների համար: Բայց բոլոր դեպքերում այս իդեալն իր արտաքին ձևով «Միացյալ և անկախ Քրդստանը» չէ, որի մասին խոսք անգամ չկա Ա. Օջալանի տեսական ու մեթոդաբանական մոտեցումներն ամփոփող «Կապիտալիստական մոդեռնիզմի հաղթահարման պրոբլեմներն ու ժողովրդավարացումը» աշխատության առաջին հատորում: **Քրդերի հավակնությունների արտահայտման ձևն ակն-**

7 Նույն տեղում, էջ 75:

8 Նույն տեղում էջ 69:

9 Նույն տեղում:

## հայտորեն փոխվել է և դրանց հիմնավորման համար նոր գաղափարախոսության կարիք է զգացվում է, բայց փոխվել է արդյոք բովանդակությունը:

Ա. Օջալանն իրավացի է, որ Նոր ժամանակներին բնորոշ օբյեկտիվիստական ճանաչողությունը և նրա առանցքը հանդիսացող օբյեկտ-սուբյեկտ հակաթեզը սպառել են իրենց: Բայց պատճառն այլ տեղում է. դրանց հիմքը կազմող նյութոսոսյան մեխանիկան չի արտացոլում ճանաչողության պրոցեսի ողջ բարդությունը: Սակայն 19-րդ դարի կեսերին մարքսիզմով «պսակված» այդ մտածողության համակարգի ու հետարդիականության արանքում գիտության զարգացման գրեթե մի ամբողջ դար կա, որը դժբախտաբար, հիմնականում անծանոթ է Ա. Օջալանին: Որովհետև հետխորհրդային շրջանի՝ իր նման բազմաթիվ այլ մտածողների օրինակով, օբյեկտ-սուբյեկտ հակաթեզի նրա ընկալումը խորքում դեռ գտնվում է նյութոսոսյան մեխանիկային բնորոշ պատկերացումների տիրույթում: Անշուշտ, իր կիսալենինյան-կիսամատյակյան աշխարհընկալման բացերը հետարդիականության դարաշրջանի մտածողների հարցադրումներով լրացնելու անկեղծ ցանկությունը նրան թույլ է տվել գտնել նոր գործիքներ կամ նեղ առումով՝ մեթոդներ: Սակայն քաղաքական առումով՝ կապիտալիստական մոդեռնիզմը, իսկ իմացաբանական առումով՝ գիտական օբյեկտիվիզմը՝ որպես թիրախներ, նրա համար մնացել են նույնը: Ա. Օջալանն իր ներսում չի կարողացել հաղթահարել դրանք, ուստի նոր գեներով է փորձում կռվել իր ենթագիտակցության մեջ մնացած հին «դասակարգային թշնամու» դեմ: Որովհետև նա դեռևս խորությամբ չի գիտակցել, որ մտածողության նման համակարգերին իրենց «դաշտում» հնարավոր չէ հաղթել. դրանք հնարավոր է միայն **հաղթահարել**:

Պատճառն ակնհայտ է. Ա. Օջալանը դեռևս խորությամբ չի յուրացրել 19-20-րդ դարերի սահմանագծին ծնունդ առած քվանտային մեխանիկայի և դրան զուգահեռ բուռն զարգացում ապրած սոցիալական փոխոսփայության ու պատմագիտության գիտական ձեռքբերումները, որոնց հիմնական էությունը օբյեկտ-սուբյեկտ հակադրության (օբյեկտիվիզմ) կամ միաձուլման (սուբյեկտիվիզմ) հաղթահարումն է՝ ճանաչողության ու նրա ծնունդ **ճշմարտության բարդությունն** ու միևնույն ժամանակ **հարաբերականությունը** գիտակցելու միջոցով:

Հասարակական գիտություններում վերջինիս ակնառու դրսևորումը մարդակենտրոն մտածողությունն է և դրա շարունակությունը դարձած անցյալի կամային ու բանական մարդուն հասկանալու հերմենևտիկական նպատակադրումը: Առանց դրանց ուսումնասիրության՝ անհնար է հաղթահարել այն ահռելի անդունդը, որն առաջ է եկել Ա. Օջալանի մտածողության համակարգում՝ մարքսիզմից դեպի հետարդիականություն հիրավի՝ գլխապտույտ թռիչքի արդյունքում: Այդ պատճառով նրա ընտրած ճանաչողական նոր ելակետը կամ նեղ առումով՝ մեթոդն իբրև գործիք, հակասության մեջ է հայտնվել լայն առումով մեթոդի, այսինքն՝ նաև տեսության հետ: Նոր տեսություններն Ա. Օջալանը դեռևս չի յուրացրել իրենց բովանդակային կողմով, ինչու՞մ շուտով կհամոզվենք՝ ծանոթանալով նրա հաջորդ հատորներում առկա «քաղաքակրթություն» հասկացության արտաքին՝ ձևական ու

բովանդակային ընկալումների խորքային հավասարությանը:

## 2. Քաղաքակրթության և նրա աշխարհագրական տարածքի նույնականացումը

Ա. Օջալանի աշխատության առաջին հատորի **երկրորդ մասը**<sup>9</sup> «Քաղաքակրթության հիմնական ակունքները», նպատակ ունի հնագիտական ու պատմագիտական հարուստ նյութերի ներգրավումով «ապացուցել» Մերձավոր-Միջին արևելյան տարածաշրջանի՝ մարդկային քաղաքակրթության ակունքներում գտնվելու արդեն հայտնի իրողությունը, իսկ պատմականորեն նրա մի մասը կազմող «Բարեբեր կիսալուսնի» հյուսիսային հատվածում կամ Տավրոս-Ջագրոսյան աղեղի վրա «բացահայտել» քրդերի ու քրդական գործոնի խաղացած դերակատարությունը:

**Առաջին առումով** Ա. Օջալանի աշխատությունը կամ էլ այն ինտելեկտուալ աշխատանքը, որը կատարվել է՝ նրան քաղաքակրթության հիմնական ակունքների հետ ծանոթացնելու համար, անկասկած, հասել է իր նպատակին: Պատճառն այն է, որ Ա. Օջալանի առաջին հատորի «Քաղաքակրթության հիմնական ակունքները» բաժինը փաստորեն առանձին ուսումնասիրություն է մարդկային ցեղի ծագման, նրա առաջին ներկայացուցիչների Հյուսիս-Արևելյան Աֆրիկայից ասիական մայրցամաքի հարավ-արևմտյան հատվածը տեղափոխվելու, մարդկության կյանքում տեղի ունեցած «նեոլիթյան հեղափոխության» և նրանում «Բարեբեր կիսալուսնի» տարածաշրջանի դերակատարության մասին: Մարդկության պատմության մեջ այդ մեծ պայթյունի դարաշրջանը որպես քաղաքակրթության ձևավորման գործընթացի սկիզբ ուսումնասիրվել է դեռևս 20-րդ դարի առաջին կեսի ավստրալացի հայտնի հնագետ **Գորդոն Չայլդի** և մի շարք այլ գիտնականների ջանքերով, և այդ առումով Ա. Օջալանը նորություն չի ասում:

Ավելին, ընդհանուր իմացաբանական առումով տվյալ քաղաքակրթական տարածքի միասնականությունը և նրանում ձևավորված հաջորդական քաղաքակրթությունների ձեռքբերումների համադրության գործընթացի համաշխարհային պատմական նշանակությունը բացահայտվել է դեռևս գերմանացի մեծ մտածող **Կառլ Յասպերսի** հայտնի աշխատության մեջ<sup>10</sup>: Իսկ մեկ այլ հնագետի՝ նույնպես գերմանացի **Կլաուս Շմիդտի** ցնցող բացահայտումները Ուրֆայից ոչ հեռու գտնվող Գյոբեքլի-թեփե (Պորտասար) լեռան վրա մեզանից մոտ 12-11 հազար տարի առաջ գոյություն ունեցած հնագույն քաղաքակրթության մասին, հաստատել են հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը մեր տարածաշրջանում, այն է՝ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվելու իրողությունը:

Վերջին հանգամանքը, անկասկած, ոգևորել է նաև պատմական Ուռհա-Եդեսիայի կամ ներկայիս Շանլիուրֆայի գյուղերից մեկում ծնված Ա. Օջալանին: Այս առումով կարելի է հասկանալ Իմրալիի բանտարկյալին համակած հպարտության զգացողությունը՝ քրդերն իրենց վրանները հաստատել են հիրավի օրհնյալ հողի վրա, որտեղ նախնադարյան մարդն իր պաշտամունքի

10 Տե՛ս **Ясперс К.** Смысл и назначение истории. М., «Республика», 1991.



առաջին տաճարներն է կառուցել: Բայց երբ դրան զուգահեռ նա անհաջող կերպով փորձում է ժառանգորդական կապ փնտրել սոսկ միջնադարում այդ տաճարների ավերակների վրա հաստատված առաջին քրդերի և իր խոսքերով՝ «շումերական քաղաքակրթության ծննդյան ակունքներում կանգնած առաջին էթնիկ խմբի»<sup>11</sup> խորքիների միջև, ապա ակամայից տրորում է այն նույն արահետը, որով ժամանակին անցել է նեոլիթյան ցեղերի տեղաշարժերում անհաջող կերպով իրենց նախնիներին փնտրած թուրքական պատմագրությունը:

Անշուշտ, պետք է նաև խոստովանել, որ Ա. Օջալանը միշտ չէ, որ հետևողական է իր անհիմն ենթադրությունների մեջ, իսկ հաճախ էլ չի խուսափում տարածաշրջանի հնագույն քաղաքակրթությունների անմիջական ժառանգորդներին մատնանշելու գայթակղությունից: Օրինակ՝ օգտագործելով ոչ թե «ուրարտացիներ», այլ «ուրարտուի բնակիչներ» հասկացությունը, նա արձանագրում է նրանց լեզուների միախառնման փաստը և իր կարծիքով՝ դեռևս ճշգրտորեն չհաստատված այդ ընդհանուր լեզվական համակարգի «որոշակի նմանությունը հայոց լեզվին»<sup>12</sup>: **Ա. Օջալանն այնքան խելացի է, որ գիտի ճշմարտությունը, բայց և այնքան «դիվանագետ», որ դրանից օգտվում է համապատասխան չափաբաժնով:**

Հնագույն շրջանի պատմության ուսումնասիրության համար նեղ մասնագիտական գիտելիքներ չունեցող Անկարայի համալսարանի քաղաքագիտության բաժնում ուսանած հեղինակից դժվար է ավելին սպասել, քան տարաբնույթ տեսակետների, ենթադրությունների, վարկածների ու նաև հակասությունների առատությունը, որն առկա է գրախոսվող հատորների առաջին գրքում: Դժվար է նաև նորություն գտնել առաջավորասիական տարածաշրջանից արիական ցեղերի տեղաշարժերի ժամանակագրական հաջորդականության ու աշխարհագրական ընդգրկման մասին նրա հարցադրումներում: Բայց մի բան ակնհայտ է. «Բարեբեր կիսալուսնի» տարածաշրջանը խորհրդանշող յուրահատուկ աղեղի հյուսիսային հատույթում սաղմնավորված և ապա հաջորդաբար մեկը մյուսին փոխարինած Մերձավոր-Միջին Արևելքի քաղաքակրթությունների հերթափոխը եղել է մեկ ամբողջական գործընթաց՝ Պորտասարից մինչև Շումեր, Եգիպտոս ու Բաբելոն, հեթիթներ, աքայացիներ, Ասորեստան ու Ուրարտու: Ուստի նրա առանձին դրսևորումների հետ անմիջական ժառանգորդական կապի մասին կարող են խոսել միայն Կառլ Յասպերսի առանձնացրած **Առանցքային ժամանակում (մ. թ. ա. 800–200 թթ.)** պատմական ասպարեզում գտնված ժողովուրդները: Քրդերի մասին նման տեղեկություններ չկան և չեն էլ կարող լինել, քանզի նրանք Ուրարտուից հետո Ա. Օջալանի առանձնացրած «մարապարսկական քաղաքակրթության» հետագայի այլացումների ծնունդն են: Ուստի Առանցքային ժամանակում հայտնի ժողովուրդների՝ ասորիների, հայերի, հույների, հրեաների կամ պարսիկների կողքին իրենց ևս ավելացնելու քուրդ հեղինակների ներկա փորձերը, որոնք հիմնվում են «քուրդ» անվանմանը մոտ զանազան պատմական ցեղանունների ու տեղանունների հետ տարվող բառախաղերի վրա, որն էլ գի-

11 Абдулла Оджалан. Цивилизация. Эпоха божеств в масках и завуалированных царей. Т. 1, М. 2011, с. 191. 12 Նույն տեղում, էջ 197:

տական հիմք չունեն: Դրանք հիմնավորապես աղավաղում են պատմականության (իստորիզմի) սկզբունքը, որը պահանջում է ցանկացած երևույթ քննել իր ժամանակին բնորոշ չափորոշիչների շրջագծում:

Դրանով հիմնավորապես խաթարվում է նաև հենց իր՝ Ա. Օջալանի կողմից իրականացված քաղաքակրթությունների հոլովույթի հաջորդական հանգրվանների բավականին բարեխիղճ վերլուծությունը, այսինքն՝ իր իսկ աշխատության ընդհանուր տրամաբանությունը: Ի վերջո՝ նա ինքն էլ հետագայում նկատում է, որ քրդերի և քրդական աշխարհի մասին առաջին կոնկրետ տեղեկություններն ի հայտ են գալիս իսլամի տարածմանը զուգընթաց՝ դրանով իսկ հաստատելով, որ իր գրքում առկա մասնակի շեղումները ուշացած ժողովուրդներին բնորոշ ընդհանուր արատի՝ սեփական հետքերն անպայման «շումերներում» փնտրելու «մանկական հիվանդության» արդյունք են:

Մրանով Ա. Օջալանը հիմնավորապես աղավաղում է նաև իր կողմից բազմիցս մեջբերվող՝ 20-րդ դարի մեծագույն պատմագետներից մեկի՝ Ֆ. Բրոդելի դրույթները «պատմական ժամանակ» հասկացության և քաղաքակրթությունների պատմության գնահատման համար անհրաժեշտ ժամանակային չափույթի՝ *longue durée*-ի մասին: **Միթե տարբեր ժամանակներում միևնույն տարածությունը զբաղեցնելու փաստը բավական է նման հավակությունների հիմնավորման համար, եթե այո, ապա ո՞րն է այդ դեպքում յուրաքանչյուր քաղաքակրթության հիմքը կազմող քաղաքային մշակույթի ու սովորական վրանի տարբերությունը:**

Մրանից բխող եզրահանգումն ակնհայտ է. եթե Մերձավոր-Միջին արևելյան մեծ կամ համադրական քաղաքակրթության առանձին բաղկացուցիչ-քաղաքակրթությունների հերթափոխը մեկ ամբողջություն է, ապա կարևոր է ոչ թե նրանց տարածքներում այս կամ այն ժամանակ ներկա լինելու մասին կասկածելի վկայությունների ձեռքբերումը, այլ այդ հնագույն քաղաքակրթությունների հիմքը կազմող բազային արժեքների և առաջին հերթին՝ լեզվի, մշակույթի, մանավանդ շինարարական արվեստի և նստակյաց ժողովուրդներին բնորոշ այլ ձեռքբերումների ժառանգորդը հանդիսանալու իրողության ապացուցումը: Արժեքային ժառանգորդականության շղթայում քրդերի մոտ նման բան գոյություն չունի և չի էլ կարող լինել: **Ուստի ասորիների, հայերի, հրեաների, պարսիկների կամ հույների կողքին քրդերի ներկայությունը հայտնաբերելու փորձերը հակասում են առաջին հերթին «քաղաքակրթություն» հասկացության այն ընկալմանը, որն առկա է Ա Օջալանի գրքում:**

Իսկ այն հարցը, թե հնագույն ժամանակներում Իրանական բարձրավանդակի ո՞ր լեռան ո՞ր գագաթին էին ֆիզիկապես գտնվում ներկայիս քրդերի նախնիները, կարող է վկայել ոչ թե հնագույն քաղաքակրթությունների շարքում վերջիններիս **ներկայության**, այլ իրանական ցեղերի՝ որպես դեռևս մեկ ամբողջության շրջագծում նրանց **առկայության** աշխարհագրական կոորդինատների մասին<sup>13</sup>:

13 Մարտին Հայդեգերի «ներկա» և «առկա» եզրույթների գիտական քննությունը տե՛ս Աշոտ Վ. Ոսկանյան, «Լինել» հայերեն: Մարտին Հայդեգերի «Գոյություն և ժամանակ» աշխատության մի քանի առանցքային եզրերի հայերեն թարգմանության խնդրի շուրջ, «ՎԷՄ», 2015, N 1:

### 3. Կապիտալիզմի նորագույն «գերեզմանափորը»

Ա. Օջալանի աշխատությունների երկրորդ հատորի «Կապիտալիստական քաղաքակրթություն» վերնագիրը ինքնին հուշում է նրա հետազոտական ծրագրի հաջորդ նպատակը, որը չի թաքցնում նաև ինքը՝ հեղինակը. «Պատմական բազում օրինակները վկայում են այն մասին, որ առանց իր համամոլորակային-հեգեմոնիստական շրջափուլում գտնվող կապիտալիզմի բնության մանրակրկիտ հետազոտության՝ ազատ կյանքի մասին ծրագրերի ու ձևաչափերի ստեղծման ցանկացած փորձ դատապարտված է լինելու ամենատարբեր աղավաղումների»<sup>14</sup>: Այսինքն՝ ներկայումս խոսքը կապիտալիզմի՝ որպես **Համակարգի**, զարգացման այն հանգրվանի մասին է, երբ նրա ճգնաժամը հիմնավորապես քայքայում է հասարակության հիմքերը, որի արդյունքում վերջինս սկսել է վերածվել կենդանաբանական այգի հիշեցնող ցուցադրության մի մեծ օբյեկտի, ինչը, ըստ Ա. Օջալանի, իրականացվում է երեք ակտիվ «**Ս ինդուստրիաների**» միջոցով՝ **Սեքս**, **Սպորտ** և մասսայական մշակույթի ու արվեստի սինթեզ, այսինքն՝ **Շոու**: Ա. Օջալանի կարծիքով՝ սա ցուցադրական հասարակության ստեղծման հիտլերյան ֆաշիզմի փորձի կրկնությունն է՝ ավելի լայն մասշտաբներով, որի արդյունքում «Գրականությունը, գիտությունը, փիլիսոփայությունը, արվեստի տարբեր բնագավառները, պատմությունը, կրոնը և իրավունքը – կյանքի բոլոր ոլորտները, վերածվում են նվաճման առարկաների և ապրանքների: Այնպիսի միջոցները, ինչպիսիք են գրքերը, ֆիլմերը, թերթերը, հեռուստատեսությունը, ինտերնետը և ռադիոն իրենց գործառույթները կատարում են որպես այդ ինդուստրիայի ապրանքային բաղադրիչներ»<sup>15</sup>:

Նեղինակը դա բացատրում է մի կողմից՝ բարոյականության ու կրոնի հետ հասարակության կապերի թուլացմամբ և նյուս կողմից էլ՝ օբյեկտ-սուբյեկտ տարանջատման վրա հիմնվող գիտական ճանաչողության մեթոդի գերակայությամբ, այսինքն՝ Նոր ժամանակների ռացիոնալիզմի դիկտատով: Ընդ որում՝ Ա. Օջալանը կապիտալիզմը չի դիտարկում իբրև Նոր ժամանակներին բնորոշ համակարգ, այլ հազարամյակների պատմություն ունեցող քաղաքակրթության ձևավորման ուղեկից և արդյունք: Որովհետև նրա կարծիքով՝ «**Քաղաքակրթությունը դա սոցիալական իշխանության բովանդակային արտահայտությունն է, որը ձեռք է բերվել պետության կողմից՝ քաղաքում կենտրոնանալու հիման վրա** (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»<sup>16</sup>: Սրանով ևս մեկ անգամ, ինքն էլ դա չնկատելով՝ Ա. Օջալանը հերքում է քրդերի համաշխարհային քաղաքակրթության ակունքներում կանգնած լինելու մասին իր նախորդ պնդումները, քանի որ նրանց «քաղաքային մշակույթը» սկսել է ձևավորվել 20-րդ դարում՝ Արևմտյան Հայաստանը լքած քաղաքաբնակ հայերի տներին «ծանոթանալու» հետ միասին:

Ա. Օջալանը կարծում է, որ պետությունը, լինելով քաղաքակրթության առանցքը, միաժամանակ չի կարող իրենով փոխարինել նրան: Այստեղից

14 Տե՛ս **Абдулла Оджалан**. Капиталистическая цивилизация. Эпоха богов без масок и голых королей. Книга вторая. М. «Зебра Е.», 2012, էջ 12:

15 Նույն տեղում, էջ 52-53:

16 Նույն տեղում, էջ 377:

ել՝ դեմոկրատական քաղաքակրթության կամ ուրբանիզացիայի տարբերությունը էտատիստական քաղաքակրթությունից, քանզի «Ինչպես պետությունն է հանդիսանում քաղաքակրթության ողնաշարը, այնպես էլ նախնադարյան համայնական կարգն է դեմոկրատական քաղաքակրթության ողնաշարը»<sup>17</sup>: Պատճառն այն է, որ Ա.Օջալանի կարծիքով՝ «...համայնական կենսակերպը, որը մարդկությունը վարել է երկար ժամանակամիջոցի ընթացքում՝ ամենալայն աշխարհագրական տարածության վրա, տվյալ սոցիումի էությունն է: Հենց դա է հասարակությունը»<sup>18</sup>:

Քրդերի պարագայում դա իսկապես այդպես է անգամ մեր օրերում, բայց խիստ դժվար է նույն դերում պատկերացնել նման կենսակերպից վաղուց հեռացած նրանց հարևաններին: Ուստի Ա. Օջալանի այս «համայնական իդիլլիան» իր ծագումնաբանությամբ, անկասկած, նեղ ազգային ակունքներ ունի: Սակայն դրանով չեն սահմանափակվում նրա հակաէտատիստական պատկերացումները, համաձայն որոնց՝ պետությունը, այդ թվում՝ ազգ-պետությունը. ճգնել-ոչնչացրել է հասարակության բոլոր ժողովրդավարական նվաճումները: Նրա կարծիքով՝ վերջին երկու դարերի բոլոր սոցիալական շարժումների հիմնական սխալը պետական իշխանությանը տիրանալով՝ այն սեփական նպատակներին ծառայեցնելու ձգտումն էր, որը հանգեցրել է ձիշտ հակառակ արդյունքին՝ պետությունն ինքն է նրանց ծառայեցրել իր նպատակներին: Դրա ամենավառ օրինակներից մեկը Ա. Օջալանը համարում է դեմոկրատական քաղաքակրթության ավանդույթներին ձիշտ հակառակ ուղղությամբ ընթացած և աստիճանաբար բյուրոկրատանալով՝ իր հնայքն ու ազդեցությունը կորցրած ԽՍՀՄ-ը: Նույն ելակետից նա խիստ քննադատության է ենթարկում ԽՍՀՄ-ում իրականացված ինդուստրիալացման քաղաքականությունը, որին նա տալիս է «փարավոնյան սոցիալիզմ» բնորոշումը:

Դեմոկրատիան պետությունից տարանջատելու Ա. Օջալանի ձգտումի ազգային ենթահողն ակնհայտ է, սակայն այնուամենայնիվ նա չի կարծում, որ հնարավոր չէ ապահովել պետական ու դեմոկրատական քաղաքակրթությունների խաղաղ համակեցությունը: Դրա համար ֆեդերատիվ կառուցվածքի վրա հիմնված ինքնակառավարվող համայնքների իրավունքը պետք է ճանաչվի պետության կողմից: Այսպիսով, Ա. Օջալանն իր հակաէտատիստական մտասկեռումը հիմնավորում է 20-րդ դարի ընթացքում Լենինի ու Մաոյի կողմից ձեռնարկված՝ ինդուստրիալ արտադրության և ազգային պետության շրջանակներում սոցիալիզմ կառուցելու փորձարարության ձախողման իրողությամբ: Ուստի իր համայնական իդեալը հետարդիականության դարաշրջանի ինքնակառավարվող համայնքների իրավունքների շրջագծում վերակերպավորելու նրա փորձերը բավականին նման են 19-րդ դարի ռուս հեղափոխական նարոդնիկների՝ ռուսական համայնքի մասին ուսմունքին: Թե ինչ ստացվեց անցյալի նման պաշտամունքից, բոլորս գիտենք:

Սակայն չնայած դրան՝ միանգամայն դրվատելի է, որ Ա. Օջալանն իր «Ազատության սոցիոլոգիան» վերտառությունը կրող երրորդ հատորի

17 Նույն տեղում, էջ 379:

18 Նույն տեղում:

սկզբնամասում ընդգծում է. «Ես փորձում եմ հասնել պատմության հասկացմանը գլոբալ մակարդակի վրա և, անկասկած, հավատում եմ, որ առանձին պատմական իրադարձությունների նշանակությունն անհնար է գիտակցել առանց ողջ մարդկության պատմության իմացության»<sup>19</sup>: Ելնելով այս սկզբունքորեն ճիշտ ելակետից՝ իր երկերի երրորդ հատորում, որն առանցքային դեր է խաղում նրա աշխարհայեցողության ներկայացման գործընթացում, Ա. Օջալանը փորձում է ամբողջացնել ու հստակեցնել դեմոկրատական քաղաքակրթության իր համադրույթը: Այդ նպատակով նա ընդարձակ էքսկուրսի միջոցով մեկ առ մեկ իրականացնում է կապիտալիստական քաղաքակրթության առաջ բերած խնդիրների թվարկումը (բարոյականության ու քաղաքականության հակադրություն, հասարակական գիտակցության պրոբլեմ, հասարակության տնտեսական խնդիրներ, ինդուստրիալիզացիայի պրոբլեմ և էկոլոգիական հարցեր, սեքս, ընտանիք, կին, ազգաբնակչության աճ, ուրբանիզացիա, բյուրոկրատացում, կրթություն և առողջապահություն, միլիտարիզմ, պատերազմի ու խաղաղության խնդիր և այլն) ու դրանցից յուրաքանչյուրի վերլուծությունը հատկացնում է բավականին լուրջ ծավալներ: Այդ ամենից հետո նա անցնում է դեմոկրատական քաղաքակրթության իր իդեալին՝ այն սահմանելով որպես բարոյական ու քաղաքական հասարակության ըմբռնում, որի գոյության վճռական պայմանը **դեմոկրատիայի ֆունկցիոնալությունն է**: Ա. Օջալանի կարծիքով՝ դրանում ազատությունը սոսկ արտաքին ֆոնի դեր է խաղում, քանզի. «Եթե ազատությունը դա քաղաքականության ինքնաարտահայտման եղանակային միջավայրն է, ապա, դեմոկրատիան դա տվյալ միջավայրում քաղաքականության իրացման միջոցն է: **Ազատություն-քաղաքականություն-դեմոկրատիա** – այս տրիադան չի կարող գոյություն ունենալ առանց բարոյական հիմքի: Բարոյականությունը մենք կարող ենք դիտարկել նաև որպես ավանդույթներով ու մշակույթով ամրագրված՝ ազատության, քաղաքականության ու դեմոկրատիայի ցուցիչներ»<sup>20</sup>: Սա միանգամայն ճիշտ հարցադրում է, սակայն ազատության վրա հիմնվող դեմոկրատիային անհրաժեշտ բարոյական միջավայրը՝ որպես հետարդիականության դարաշրջանին բնորոշ սուր պահանջմունք, բարոյականության զարգացման այն հանգրվանն է, որը բազում հազարամյակներով բաժանվում է նախնական դեմոկրատիայի համայնական իդեալից: Ուստի քրդերի համայնական կենսակերպի վրա հիմնվելով՝ կապիտալիզմը շրջանցելու Ա. Օջալանի երազանքի իրականացումն ավելի բարդ առաջադրանք է, քան 19-րդ դարի ռուս հեղափոխական նարոդնիկների՝ ռուսական համայնքի վրա դրված անհիմն հույսերը:

Ա. Օջալանը նույնպես դրանց լուծումը չունի. նա կարծում է, որ վերջին 5 հազար տարիների պատմությունը կերտվել ու կերտվում է դեմոկրատական քաղաքակրթության՝ որպես բարոյական ու քաղաքական հասարակության, և դասակարգային ու պետական հասարակության միջև ակտիվ փոխգործակցության ու հակասությունների, այսինքն՝ խաղաղության ու պատերազմի հերթափոխի միջոցով, ուստի անթույլատրելի է համարում

19 Абдулла Оджалан... Социология свободы. Кн. 3 . М. «Зебра Е.» , 2014, с. 21.  
 20 Նույն տեղում, էջ 177:

նան դրանց փոխադարձ ոչնչացումն ու կլանումը: Հրաշալի ցանկություն է, բայց ինչպե՞ս է այն իրականացվելու:

Զգտնելով այս հարցի բանական լուծումը՝ Ա. Օջալանը տարվում է անհիմն մեսիանիզմով: Նա կարծում է, որ անձամբ հենց իրեն է բաժին ընկել դեմոկրատական քաղաքակրթության համակարգման հարցը՝ որպես հետկապիտալիստական հասարակության կառուցման խնդրի լուծման մեծ առաքելություն: Որովհետև ինքը կանգնած է հետևյալ մեծ հակասությունը հաղթահարելու խնդրի առջև. «մի կողմից՝ լինելով այն մշակույթի ազդեցության տակ, որը գոյություն ունի հազարամյակների ընթացքում (մ. թ. ա. 10 000-ական թթ. մինչև մեր օրերը) ագրարային հեղափոխության հայրենիքում, մյուս կողմից՝ ես ձեռնարկել եմ հետկապիտալիստական հասարակության կառուցման համար պայքարը»<sup>21</sup>:

Շուրջ 12 հազար տարիների միջև առկա «դատարկությունը լցնելու» նման ֆանտաստիկ հավակնությունը հիրավի կրկնակի մեսիանիզմ է, քանի որ անգամ Կ. Մարքսը, չնայած իր հրեական ծագմանը, երբեք էլ չի մատնանշել, որ իր նախնիների՝ Մերձավոր-Միջին Արևելքից սերելու փաստն իրեն առավելություններ է տալիս դեպի կոմունիզմ մարդկությանն առաջնորդելու գործում: Մինչդեռ ի տարբերություն քրդերի՝ հրեաներն Առանցքային ժամանակում հայտնի այն ժողովուրդների շարքում են եղել, որոնք այս կամ այն չափով շարունակել են Եգիպտոսի ու Բաբելոնի մեծ մշակույթների հետագա զարգացման գործը:

Իրականում մշակութային հիմք չունեցող նման առաքելության իրականացման համար Ա. Օջալանն անցնում է քաղաքակրթության պատմության ընթացքում գոյություն ունեցած դեմոկրատական քաղաքակրթության տարրերի ներկայացմանը՝ տոհմ, ընտանիք, տոհմական համայնքներ ու ցեղեր, ազգություններ և ազգեր, գյուղական ու քաղաքային տարրեր և այլն: Ա. Օջալանի կարծիքով՝ հենց սրանք են կազմել բուն հասարակությունը, սրանց համեմատ իշխող դասակարգերը, որոնց անունն են ստացել տվյալ դարաշրջանները, չնչին փոքրամասնություն են հանդիսացել: Անշուշտ, դա իսկապես այդպես է եղել, մանավանդ Կ. Մարքսի առանձնացրած՝ Արևելյան հասարակության մեջ, բայց տվյալ հարցադրման համատեքստում կարևորը ոչ թե «բուն հասարակության» քանակական, այլ որակական հատկանիշների վերլուծությունն է: Ի՞նչ են նրանք տվել դեմոկրատիայի զարգացման գործընթացին հետագայում քանակապես իրենց հազարավոր անգամներ զիջած հունական դեմոկրատիայի ներկայացուցիչների համեմատ. այս է բուն խնդիրը, որը շրջանցվում է Ա. Օջալանի կողմից: Որովհետև իրականում արևելյան «դեմոկրատիայի» շղարշի տակ Ա. Օջալանը ստեղծել է մարքսիզմից մնացած իր հին սրբություն սրբոց **«պրոլետարիատ»** ֆետիշի նոր կերպավորումը:

Անշուշտ, ուշարժան է ժամանակակից դեմոկրատիայի ինստիտուտների վերակառուցման երեք՝ **ինտելեկտուալ, բարոյական և քաղաքական** ասպեկտների մասին Ա. Օջալանի ուսմունքը: Դրանցից առաջինը՝ **ինտելեկտուալ** առաջադրանքը, հստակեցնելուց առաջ նա կրկին մերժում է պոզիտիվիստական օբյեկտիվիզմն ու սուբյեկտիվիստական ռելյատիվիզմը

21 Նույն տեղում, էջ 181:

և ինտելեկտուալ հեղափոխության իրականացման համար առաջարկում է այդ ոլորտը կառուցվածքայնացնել «Մշակույթների և ակադեմիաների համաշխահային կոնֆեդերացիայի» ձևավորման միջոցով: Նպատակը՝ դրանք Համակարգի ազդեցությունից դուրս բերելն է:

**Բարոյական** պարտավորությունները հստակեցնելուց առաջ Ա. Օջալանը տալիս է այդ հասկացության իր սահմանումը՝ «Սոցիալական ավանդույթներով, սովորույթներով և կանոններով ապրելու ունակությունը կարելի է բնորոշել իբրև բարոյականություն»<sup>22</sup>: Ա. Օջալանը անչափ կարևորում է բարոյականության նշանակությունը, քանի որ նրա կարծիքով՝ հասարակությունը շարունակում է գոյատևել ոչ թե իրավական համակարգի, այլ բարոյական տարրի շնորհիվ: Ուստի նա առաջարկում է միավորել հիմնարար բարոյական ուսմունքներն ընդդեմ հետարդիականության ագրեսիայի՝ ստեղծելով «Բարոյական և սուրբ ուսմունքների համաշարհային կոնֆեդերացիա»<sup>23</sup>:

Իսկ ինչ մնում է դեմոկրատական քաղաքակրթության կառուցման **քաղաքական** առաջադրանքին, ապա դրանում առանցքային խնդիրը Ա. Օջալանը համարում է ազգերին համախմբող քաղաքական և դեմոկրատական կոնֆեդերացիաների ձևավորումը: Այդ նպատակով նա առաջարկում է որպես ՄԱԿ-ի այլընտրանք ստեղծել «Դեմոկրատական ազգերի համաշխարհային կոնֆեդերացիա»<sup>24</sup>:

Սակայն փայլուն նախագծերի այս հրավառությունը դեռևս չի տալիս ակնհայտորեն գոյություն ունեցող և իր վճռահատումը պահանջող հարցի լուծման բանալիները, քանի որ օջալանյան «նոր դեմոկրատիայի» գաղափարը՝ որպես «նոր պրոլետարիատի» մասին ուսմունքի վերապրուկ, կառուցված է **հակադրության տիրույթում**: Ո՞րն է այն երաշխիքը, որ անգամ ԽՍՀՄ-ի մեծ փորձարարությունն ի վերջո՝ պետական կապիտալիզմի էտատիստական մոդելի վերածած Համակարգը չի կլանելու նաև Ա. Օջալանի «նոր դեմոկրատիային»:

#### 4. Հայրենիքի գաղափարի հասունացումը

Իր աշխատությունների առաջին երեք հատորներում ներկայացնելով մարդկային քաղաքակրթության զարգացման հեռանկարների մասին համամարդկային կամ ինչպես ինքն է բնորոշում՝ ունիվերսալ դեղատոմսերի ու լուծումների բոլոր կողմերը՝ Ա. Օջալանն իր չորրորդ հատորից՝ «**Քաղաքակրթության ձգնաժամը Մերձավոր ու Միջին Արևելքում**», անցում է կատարում այն տարածաշրջանի հիմնախնդիրներին, որտեղ ինքը ծնվել ու պայքարել է քրդական հարցի լուծման համար: Մրանով կրկին հաստատվում է այն իրողությունը, որ Իմրալի կղզու բանտարկյալը զգալիորեն տարբերվում է ՔԲԿ-ի Ապոլից՝ քուրդ ժողովրդի հակաթուրք պայքարի ձանաչված առաջնորդից: Որովհետև այժմ նա ղեկավարվում է դեդուկտիվ մեթոդով՝ ընդհանուրից անցնելով դեպի մասնավորը:

Ընտրված վերնագիրն ինքնին հուշում է, որ իր հետազոտական ծրագրի

22 Նույն տեղում, էջ 428:  
 23 Նույն տեղում, էջ 441:  
 24 Նույն տեղում, էջ 457:

գրի հաջորդ նպատակին անցնելու համար Ա. Օջալանը կրկնելու է առաջին հատորի **երկրորդ մասում** («Քաղաքակրթության հիմնական ակունքները») տեղ գտած դրույթները մարդկային ցեղի ծագման, նեոլիթյան հեղափոխության և դրանում «Բարեբեր կիսալուսնի» դերը խաղացած տարածաշրջանի դերակատարության մասին, որի առանցքում հեղինակը առանձնացրել է Տավրոս-Ջագրոսյան աղեղը կամ ներկայիս թուրք-իրաքյան սահմանի երկու կողմերում ընկած քրդաբնակ երկրամասը:

Ինչպես մեր նախորդ գնահատականներում, այնպես էլ այստեղ չփորձելով հակադրվել նշված տարածաշրջանի՝ քաղաքակրթության բնօրրաններից մեկը, եթե ոչ՝ հիմնականը լինելու մասին նորանոր տեղեկություններով հաստատվող տեսակետին՝ **կրկին** ստիպված ենք հիշեցնել պատմության դիաքրոնիկ ընկալման երկաթե կանոնը: «Բարեբեր կիսալուսնի» տարածաշրջանը խորհրդանշող յուրահատուկ աղեղի հյուսիսային հատույթում սաղմնավորված և ապա Պորտասարից մինչև Շումեր, Եգիպտոս ու Բաբելոն, աքայացիներ ու հեթիթներ, Ատրեստան ու Ուրարտու հաջորդաբար մեկը մյուսին փոխարինած Առաջավոր Ասիական համադրական քաղաքակրթությունը (Կ. Յասպերս) թեև իսկապես եղել է մեկ ամբողջություն, բայց նրա առանձին դրսևորումների հետ ուղղակի և անմիջական ժառանգորդական կապի մասին կարող են խոսել միայն Առանցքային ժամանակում պատմական ասպարեզում գտնված ժողովուրդները: Քրդերի մասին նման ուղղակի տեղեկություններ չկան և չեն էլ կարող լինել, քանզի նրանք իրանական քաղաքակրթության հետագայի փոխակերպումների ծնունդն են:

Ուրեմն հնագույն քաղաքակրթական տարածքում ապրելը մի բան է, նրա անմիջական ժառանգորդը լինելը՝ բոլորովին այլ իրողություն: Եվ երկրորդ առումով քրդերի ու նրանց առաջնորդի գիտական պրպտումները հիմնավորված կարող են լինել այնքանով, որքանով նրանց կհաջողվի վերականգնել իրենց բնօրրանի՝ Արևմտյան Իրանի ու դրա միջոցով՝ Առաջավոր Ասիական ողջ քաղաքակրթության հետ ունեցած միջնորդավորված, այսինքն՝ անուղղակի կապը: Իսկ դրա փոխարեն եվրոպական զանազան երկրներում ատենախոսություններ պաշտպանելու ճանապարհով տորբելով թուրքական պատմագրության անցած անփառունակ ուղին՝ նրանք դրսևորում են սուկ պատմական ասպարեզում ուշացած ժողովուրդներին բնորոշ ինտելեկտուալ դալտոնիզմը: Ի վերջո հենց իրենք՝ եվրոպացիները, կարող են հարցնել՝ այդ ինչպե՞ս եղավ, որ Գյոբեքլի-թեփե-Պորտասարի 12 հազար տարվա հնություն ունեցող շինարարական արվեստի ժառանգորդները դեռ մինչև վերջերս վրաններում էին ապրում:

Ներկայացնելով Մերձավոր-Միջին Արևելքի հնագույն քաղաքակրթության արժեքային համակարգի հետագա հոլովույթի հաջորդական հանգրվանների իր ընկալումը և այն հասցնելով մինչև Հին Հունաստան ու Հռոմ՝ Ա. Օջալանը փորձում է բացահայտել նաև նրա ընդերքում հասունացած համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության ու իսլամի ձևավորման գործընթացի առանձնահատկությունները: Բայց առաջինը նրա մոտ չի ստացվում թերևս անհրաժեշտ տեղեկույթի բացակայության պատճառով: Կաղում են մանավանդ հին հունական մշակույթի բարդ հոլովույթի



հաջորդական հանգրվանների մասին Ա. Օջալանի գիտելիքները, մասնավորապես, Մերձավոր-Միջին Արևելքում քաղաքակրթության զարգացման նոր որակ ապահոված հելլենիզմի գիտական ընկալումը:

Թերևս նույն պատճառով նա չի կարողանում ներկայացնել նաև քրիստոնեական ընդհանուր քաղաքակրթության ձևավորման մեջ տարածաշրջանի առանձին ժողովուրդների, մասնավորապես հայերի դերակատարությունը, որն ամենևին էլ չի եղել անտիկ հունական ավանդույթի պարզ շարունակությունը: Այս ամենը կարելի էր համարել Անկարայի համալսարանում նրա ուսանելու արդյունքը, եթե հետագա շարադրանքում չնկատեինք նաև այլ «տարօրինակություններ»:

Փոխարենն ավելի հաջողված է Մերձավոր-Միջին Արևելքի համադրական քաղաքակրթության զարգացման վերջին հանգրվանի՝ իսլամական քաղաքակրթության ձևավորման գործընթացի ներկայացումը, որը հիմնվում է այն ճշգրիտ գնահատականի վրա, որ իսլամը ոչ թե ռաֆինացված (զտված) կրոնական գաղափարախոսություն է կամ օրիգինալ քաղաքակրթություն, այլ Մերձավոր ու Միջին Արևելքում ծավալված քաղաքակրթական գործընթացների «հոսքի» մեկ շրջափուլը<sup>25</sup>:

Սակայն հնագույն առաջավորասիական ողջ քաղաքակրթության՝ մինչև իսլամի ձևավորումն անցած հաջորդական հանգրվանների ներկայացումից հետո Ա. Օջալանը մի պահ կանգ է առնում և չգիտես ինչու հատուկ կերպով ընդգծում է, որ ինքը երբեք չովիսիստ չի եղել, քանի որ **«Անհնար է վիճարկել, որ ճիշտ պատմագրությունը մարդկությանն անհրաժեշտ է ամենից ավելի, քանզի ճիշտ գրված պատմությունը դա ճիշտ մարդն է, իսկ ճիշտ մարդը՝ ճիշտ կյանքը** (ընդգծումը մերն է – Գ.Խ.)»<sup>26</sup>: Բայց երբ նման ներածական խոսքից հետո նա վերադառնում է առաջավորասիական քաղաքակրթության համակարգում խուրրիների խաղացած դերին, որոնք մ.թ.ա. 2000-ական թվականներին «տիրում էին ժամանակակից քրդերի բնակության գրեթե բոլոր տարածքներին»<sup>27</sup>, մոռանում է քիչ առաջ իր տված խոստումը և եզրակացնում, որ նա ով ինչ որ չափով զբաղվում է ստուգաբանությամբ, կարող է դյուրությամբ նկատել, որ խուրրիների լեզուն նախաքրդական լեզու է: Եվ որպես այդ ամենի «ապացույց» Օջալանն օգտագործում է իր իսկ կողմից փաստորեն մեկ անգամ արդեն հերքված փաստարկը. «Բարբառները, որոնք պահպանվել են հնագույն շրջանից Դերսիմի, Բինգյուլի ձորերի խորքերում և Զագրոսի լեռներում, միայն հաստատում են խուրրիներն լեզվի մերձավորությունը քրդերենին»<sup>28</sup>:

Անշուշտ, մենք հեռու ենք Ա. Օջալանին շովիսիստ համարելուց, որպիսին նա չի էլ կարող լինել որպես ճնշված, պետականազուրկ ժողովրդի ներկայացուցիչ: Սակայն գրեթե համոզված ենք, որ խոսքն այստեղ ոչ թե քրդերենի, այլ քրդացած հայերի բարբառների մասին է, որոնց ու խուրրիների լեզվական նմանությունների վրա հեղինակն ուշադրություն է դարձ-

25 Տե՛ս **Абдулла Оджалан**. Кризис цивилизации на Ближнем и Среднем Востоке и решение на основе принципов демократической цивилизации. Кн. 4, М. «Издательство Академии социальных наук», 2015, էջ 51-52:

26 Նույն տեղում, էջ 117-118.

27 Նույն տեղում, էջ 119:

28 Նույն տեղում:

րել իր աշխատության առաջին հատորում, որտեղ խոսում է «Ուրարտուի բնակիչների» լեզուների միախառնման մասին և արձանագրում այդ ընդհանուր լեզվական համակարգի «որոշակի նմանությունը հայոց լեզվին»<sup>29</sup>: Բայց ահա այստեղ՝ չորրորդ հատորում մոռանալով իր նախորդ տեսակետը՝ Ա. Օջալանը խուրրիների հնագույն լեզուն փորձում է կապել քրդերենի հետ: Թերևս նրան «արջի ծառայություն» են մատուցել վերջին շրջանում նման ածպարարություններով զբաղվող որոշ քուրդ «գիտնականները»՝ մեծապես խաթարելով Ա. Օջալանի աշխատության գիտականությունը:

Քրդերը ծագումով իրանցիներ են, ուստի հետագայում Հայկական լեռնաշխարհի տեղափոխված նրանց մի հատվածի լեզվում **կուրմանջիում** ներառված հայերեն բառերը չեն կարող որևէ ուղղակի կապ ունենալ խուրրիների լեզվի հետ: Հազարամյակներով միմյանցից բաժանվող տարբեր դարաշրջաններում ձևավորված լինելու պատճառով տեսականորեն անգամ դրանք չէին կարող մեկը մյուսի անմիջական ազդեցությունը կրել:

Ա. Օջալանի չորրորդ հատորում կան ևս մի քանի նման վարկածներ, այդ թվում՝ քրդերի տարածաշրջանի ամենահին ժողովուրդը լինելու մասին անհիմն պնդումը, բայց, այնուամենայնիվ, մենք հիմք ենք ընդունում նրա այն թեզը, որ ինչպես «քուրդ» և «Քրդստան», այնպես էլ «թուրք» ու «Թուրքեստան» հասկացությունները շրջանառության մեջ են մտել իսլամի տարածման դարաշրջանում: Չլինելով հնագույն պատմության մասնագետ՝ Ա. Օջալանն ակնհայտորեն խճճվել է հեռավոր նախնիներ որոնելու իր ջանքերում՝ խիստ ոգևորվելով այն իրողությունից, որ հետագայում պատմական տարբեր հանգամանքների բերումով քրդերը բնակություն են հաստատել հնագույն քաղաքակրթությունների ավերակների վրա:

Հակառակ դրան՝ Ա. Օջալանը բավականին քաջատեղյակ է Հին Արևելքի կրոնական հավատալիքների, իսկ հետագայում էլ դրանց ազդեցությանը՝ համաշխարհային կրոնների ձևավորման պատմությանը, այնքան քաջատեղյակ, որ կարող է աստվածաբանական բանավեճեր մղել ամենատարբեր հարցերի շուրջ: Նրան այդ ուսմունքները հետաքրքրում են որպես տոհմա-ցեղային հասարակությունների՝ պետական-պաշտոնական հաստատությունների դեմ պայքարի զենքեր, այսինքն՝ որպես համակարգային մշակույթի դեմ պայքարի գաղափարական հիմնավորումներ:

Ա. Օջալանի չորրորդ հատորում տեղ են գտել նաև ժամանակակից Եվրոպայի ձևավորման պատմությանը ու նրանում առկա «հեգեմոնիստական ուժերի» գործունեության վերլուծությանը նվիրված բաժիններ: Թերևս դա արվել է վերջին երկու դարերի ընթացքում Մերձավոր-Միջին Արևելքի ժողովուրդների հարաբերություններում առաջ եկած կոնֆլիկտներն ազգ-պետության բնորդի պարտադրանքի արդյունք ներկայացնելու համար: Որպես պերմանենտ բնույթ ստացած և իր մեջ քառսի տարրեր պարունակող նման կոնֆլիկտների լուծման բանալի՝ Ա. Օջալանն առաջարկում է ժամանակակից դեմոկրատիայի իր մոդելը: Նա կարծում է, որ Մերձավոր - Միջին Արևելքի ժողովուրդներին պարտադրված ազգ-պետության եվրոպական բնորդը վերածվել է կատարյալ աբսուրդի և ինքնախաբեության: Արդյունքում՝ նրանք, պատասպարվելով արհեստականորեն

29 Абдулла Оджалан. Цивилизация. Эпоха божеств в масках и завуалированных царей. Т. 1, М. 2011, с. 197.

ստեղծված ազգային սահմաններում, ոչ թե ուժեղացել, այլ թուլացել են: Ուստի չժխտելով հանդերձ «ազգ» եզրույթը՝ Ա. Օջալանը կարծում է, որ դրա հետ միասին կարելի է շրջանառության մեջ դնել մեկ այլ՝ «մերձավորարևելյան ազգ» հասկացությունը, որը թույլ կտա լուծել առկա պրոբլեմները: Նրա կարծիքով՝ «մեծ ազգերի տրոհվածությունը (արաբներ, թյուրքեր, քրդեր, պարսիկներ), փոքրաքանակ ազգերի մեկուսացվածությունը (հայեր, հրեաներ, ասորիներ, կովկասյան ժողովուրդներ), կարող է գտնել իդեալին մոտ լուծում այնպիսի մեծ, բաց և ձկուն ազգի միջավայրում, ինչպիսին մերձավորարևելյանն է»<sup>30</sup>: Նման «ազգը» Ա. Օջալանի կարծիքով՝ կարող է ձևավորել «Մերձավոր-Միջին Արևելքի ազգերի դեմոկրատական կոնֆեդերացիա», որն իր հերթին բաղկացած կլինի «Թյուրքական դեմոկրատական կոնֆեդերացիայից», «Քրդստանի դեմոկրատական կոնֆեդերացիայից» և նմանատիպ արաբական ու իրանական միավորներից: Այս համատեքստում՝ «Քրդստանի դեմոկրատական կոնֆեդերացիայի» շրջագծում տեսնելով նաև Հայկական հարցի լուծումը, Ա. Օջալանը կարծում է, որ ներկա Հայաստանի առկայությունը հայերի մոտ երբեք չի հաղթահարելու կորուսյալ Հայրենիքի կարողը: Դրա հետ միասին, նա բազմանշանակ կերպով ակնարկում է. «Ինչպես աններելի սխալ է մեկի Հայրենիքը վերցնելն ու մյուսին տալը, նույնքան էլ աններելի հանցագործություն է նաև հակառակը (ընդգծումը մերն է – Գ.Խ.)»<sup>31</sup>: Այսինքն ինչ եղել է, արդեն անցյալում է, ու քանի որ Ա. Օջալանի կարծիքով՝ իրականում ո՛չ թուրքերն են այդ «սխալի» համար հիմնական մեղավորները և ո՛չ էլ, առավել ևս, քրդերը, այլ տարածաշրջանում ազգ-պետության բնորոշ ներդրած հեգեմոնիստական ուժերը, ապա ոչ ոք պատասխանատու չէ նրանում, որ հայերի Հայրենիքը հայտնվել է ուրիշների ձեռքերում, ուստի այսօր այն հետ պահանջելը ոչ թե «սխալ», այլ «հանցագործություն» է:

Ստացվում է, որ Ա. Օջալանի համար Հայրենիքը իր հայրենակիցների կողմից գողացվող սովորական ոչխարի նման մի բան է, որը հետ չեն տալիս: Այդ դեպքում անհասկանալի է դառնում ներկա գրախոսականի հենց սկզբում արձանագրված իրողությունը. ինչո՞ւ է Ա. Օջալանը 2010 թ. դեկտեմբերի 22-ին Իմրալի կղզու իր բանտախցից նամակ գրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ բողոքելով այն անարդարությունների դեմ, որոնք իրականացվում են իր և իր ժողովրդի հանդեպ, ինչի հետևանքով քրդերը դատապարտվում են պատմության աննախնդրում մոռացվելու նույն վիճակին, ինչպես ոչ հեռավոր անցյալում հայերը, հույները կամ ասորիները: Սրանից բխող մեր եզրահանգումը հստակ է. **գողոնի համար պայքարում վերացել է արդարի ու անարդարի սահմանագիծը, ինչը և տեղի է ունեցել քրդերի ու Ա. Օջալանի պարագայում:**

Այս հակասական դատողություններով ավարտելով իր աշխատությունների չորրորդ հատորը՝ Ա. Օջալանն այդպես էլ չի պարզաբանում, թե մեր տարածաշրջանում գոյություն ունեցող պետությունների առկայության պայմաններում, ինչպե՞ս են ստեղծվելու իր երազած դեմոկրատական կոն-

30 **Абдулла Оджалан**. Кризис цивилизации на Ближнем и Среднем Востоке и решение на основе принципов демократической цивилизации. Кн. 4, М. «Издательство Академии социальных наук», 2015, с. 393. 31 Նույն տեղում, էջ 416:

Ֆեդերացիաները: Նա միայն նշում է, որ ժողովուրդների հարաբերությունները պետք է կառուցվեն ո՛չ «պատերազմ մինչև վերջ» և ո՛չ էլ՝ «ձուլում պետության ներսում» սկզբունքների վրա: Վերջերս ձևավորված և Թուրքիայի խորհրդարանում իր ներկայությունն ապահոված՝ ՔԲԿ-ի քաղաքական թևը ներկայացնող «Ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունում» տարբեր ազգերի լայն ներկայացվածությունը, թերևս Ա.Օջալանի այս ծրագրի իրականացման փորձերից մեկն է...

**Մեր կարծիքով՝ դեմոկրատական հասարակության մեջ ազգային հարցի լուծման այս կասկածելի դեղատոմսերը հիմնավորելու համար է Ա. Օջալանը իր աշխատության առաջին հատորում առաջ քաշել Մեր-ձավոր-Միջին Արևելքի համադրական քաղաքակրթության՝ քաղաքակիրթ մարդկության նախահայրենիքը լինելու մասին դրույթները: Քանզի որքան էլ ֆանտաստիկ լինեն նրա դատողությունները շումերաքրդական ժառանգորդականության, կամ՝ խուրրիերենի ու կուրմանջիի միջև առկա ընդհանրությունների մասին, արևմտյան-ապագային միջավայրում այդ ո՞վ կարող է մերժել քաղաքակիրթ մարդկության ընդհանուր նախահայրենիքում մի նոր ընդհանության՝ դեմոկրատական ազգի ձևավորման պատմական առաքելությունն իրականացնելու Ա. Օջալանի մեսիանական հավակնությունները:**

Բայց մինևույն ժամանակ՝ սրանով իր աշխատության սկզբում ներկայացված քաղաքակիրթ մարդկության ընդհանուր անցյալը փոխակերպվում է ընդհանուր ապագայի՝ դեմոկրատական ազգի շղարշի տակ քողարկված, ձևով՝ արևելյան, բովանդակությամբ՝ քրդական «դեմոկրատիայի»: Այդ նպատակով Ա. Օջալանն իր չորրորդ հատորի հիմքում դրված տեսական ու մեթոդաբանական սկզբունքների ներկայացման ժամանակ խուսափում է «հայրենիք» հասկացության բացարձականացումից՝ համոզված լինելով, որ «հայրենիքը ազգի և անհատի կենսագործունեության գործիք է, բայց ոչ իդեալ»<sup>32</sup>: Սակայն նման սահուն անցումը դարձյալ չի խանգարում Ա. Օջալանին էլ ավելի հնացնելու իր անցյալացվող իդեալի՝ քրդական «դեմոկրատիայի» ձևավորման ու զարգացման ժամանակագրությունը՝ նեոլիթյան հեղափոխության դարաշրջանից այն հասցնելով մարդ-բանականի երևան գալու շրջանը: Պարզվում է, որ ոչ միայն մարդկային քաղաքակրթությունն է առաջացել մեր տարածաշրջանում, այլև ժամանակակից մարդը, քանզի «Վերջին հետազոտությունները խոսում են այն մասին, որ homo sapiens տիպի մարդը, որը համարվում է ժամանակակից մարդու նախահայրը, վերջին երեք հազարամյակների ընթացքում սկսել է ակտիվ կերպով զարգանալ ու վերածվել տիրապետող տեսակի հենց «Բարեբեր կիսալուսնի» տարածաշրջանում (դա Բրդստանի կենտրոնում տեղակայված աշխարհագրական տարածք է, որում այսօր էլ մեծամասամբ ապրում են քրդեր)»<sup>33</sup>:

Ու քանի որ նրա կարծիքով՝ Եգիպտոսի ու Շումերի քաղաքակրթություններին ծնունդ տված մշակույթը նույնպես սկիզբ է առել Տավրոսի ու

32 Տե՛ս Абдулла Оджалан. Курдская проблема и решение модели демократической нации. Кн. 5, М. 2015, էջ 62:

33 Նույն տեղում, էջ 103:

Զագրոսի լեռնային աղեղում, իսկ «...քուրդ ժողովուրդն այսօր շարունակում է իր գոյությունը որպես տվյալ աշխարհագրական տարածաշրջանի հնագույն նստակյաց ժողովուրդ (sic), ապա անխուսափելի է քրդական իրականության ձևավորման [գործընթացի] կապն այդ մշակույթի հետ»<sup>34</sup>:

Թե ղր քուրդ «գիտնականն» է անհարմար վիճակի մեջ դրել իրենց ազգի առաջնորդներից մեկին՝ նման զավեշտը նրան մատուցելու և դրան գումարած՝ Պորտասար-Գյոբեքլի-թեփեի հնագույն քաղաքակրթությունը «քրդացնելու» միջոցով, մեզ համար դեռևս անհայտ է մնում: Անհայտ է նաև, թե ընդհանրապես ինչպես կարող են համաշխարհային քաղաքակրթության ակունքներում կանգնած լինել 20-րդ դարում դեռևս վրանաբնակ քրդերը: Իսկ ասվածն «ապացուցող» փաստորեն միակ «փաստարկը»՝ շումերական շրջանի կուրտիների և ժամանակակից քրդերի անվան միջև «շատ աննշան տարբերություն»-ը<sup>35</sup> և ընդհանրապես ցեղանունների նմանությունը հիմք դարձնելը ավելի քան ծիծաղելի է: Ծիծաղելի է այն պարզ պատճառով, որ միջնադարում միայն շրջանառության մեջ մտած «քուրդ» հասկացությունը սկզբնական շրջանում անգամ էթնիկ իմաստ չի ունեցել և նշանակել է լեռնաբնակ խաշնարած:

Մինչդեռ Ա. Օջալանի պնդմամբ. «Դատելով հիմնական աղբյուրներից, շումերներ էին անվանում ժողովրդին, որը բնակեցնում էր հյուսիսային և արևելյան լեռնային շրջանները, **կուրտիին**, որը մինչ օրս բացահայտում է իր իմաստը, իսկ արևմուտքում գտնվող տոհմա-ցեղային հասարակությունները նրանց ընդհանրացված կերպով անվանում էին **ամորիտներ**: «Կուրտի» բառացիորեն նշանակում է լեռնային ժողովուրդ»<sup>36</sup>: Բայց շումերական շրջանի լեռնաբնակների ու միջնադարի քրդերի հետ կապ հաստատելու համար հիրավի՝ «ժամանակի մեքենա» է հարկավոր, որը հեղինակը չունի:

Ուրեմն այս ամենը **Ֆանտաստիկայի Ժանրից** է, որի վրա հենվելով հնագույն ցեղերի անունների միջև ստեղծվող նման գուգահեռներից մինչ «Քրդստան» հասկացության ի հայտ գալն Ա.Օջալանն օգտագործում է «քրդական իրականություն» կամ «քրդական աշխարհագրական տարածք» հասկացությունները՝ այդպես էլ չհստակեցնելով դրանց աշխարհագրական սահմանները: Իսկ ահա 11-րդ դարից՝ Մանազկերտի ձակատամարտի և տարածաշրջանում Բյուզանդիայի տիրապետությունը սելջուկյանով փոխարինվելու շրջանից էլ սկսում է կիրառել «Քրդստան» հորինվածքը՝ պնդելով, թե առանց քրդերի աջակցության վերջիններս չէին կարող հաղթել բյուզանդական զորքերին: Նույն գործառույթը նա արդեն ոչ առանց հիմքի քրդերին է վերագրում նաև Օսմանյան կայսրության շրջանում, երբ Սեֆյան Իրանի դեմ 1514 թ. Չաղրանի ձակատամարտում սուլթան Յավուզ Սելիմի ձեռք բերած հաղթանակը կապում է Անասիայում քուրդ ցեղապետների հետ նրա կնքած պայմանագրի հետ: Արդյունքում ստացվում է, որ սելջուկների գալու հետ միասին՝ Հայաստանին ու հարակից երկրներին տիրացել են ոչ թե վերջիններս, այլ քրդերը, ինչը բացարձակ սուտ է, քանզի տարածա-

34 Նույն տեղում, էջ 105:  
 35 Նույն տեղում, էջ 109:  
 36 Նույն տեղում:

շրջանի «բանալիները» նրանց տրվել են միայն օսմանյան սուլթանների կողմից:

Հիմնովին անտեսելով ու լռության մատնելով մի քանի հազարամյակ գոյություն ունեցած պետությունների պատմությունն ու դրանց ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ՝ Ա. Օջալանը միանգամայն գիտակցաբար չի օգտագործում տարածաշրջանի հնագույն ժողովուրդների անուններով խորհրդանշվող նրանց հայրենիքների անվանումները: Միայն «Ատրեստան» անվանումն է շրջանառվում նրա մոտ, այն էլ մինչև այդ պետության կործանումը: Ստացվում է, որ շումերների ժամանակներից մինչև 11-րդ դարը **Մեծ Հայքը** «քրդական աշխարհագրական տարածք» է եղել, իսկ դրանից հետո էլ դարձել է «Քրդստան»: Նման փոխատեղումների արդյունքում Ատրեստանն ու Հյուսիսային Միջագետքը Ա. Օջալանի համար վերածվել են Հարավային Քրդստանի, իսկ Արևմտյան Հայաստանը՝ հյուսիսայինի, որպեսզի հետագայում դրանց գումարվեն նաև Արևմտյան Քրդստանը (ներկայիս Սիրիայի տարածքում) և բնականաբար Իրանում գտնվող իրենց բուն հայրենիքն էլ դառնա Արևելյան Քրդստան: Ուստի Ա. Օջալանի կարծիքով՝ ««Իրաքյան Քրդստան» կոչվող երևույթը քաղաքական բեմահարթակին հայտնվել է այն ձևով, ինչը նման է հետևյալին. ճիշտ այնպես ինչպես ի պատասխան հելլենների ու հայերի կողմից իրենց պատմական հայրենիքի կորստի նրանց տրամադրվել է յուրահատուկ դիետիկ սննդաբաժին՝ հայրենիքի փոքր կտորի տեսքով»<sup>37</sup>:

Այսինքն՝ Իրաքյան կամ «Փոքր Քրդստան»-ը, որը կրկնում է իր կողմից շրջանառության մեջ դրվող ներկա Հայաստանի «Փոքր Հայաստան» բնորոշումը, անընդունելի է Ա. Օջալանի համար: Նրա կարծիքով՝ «Քրդստան» հասկացությունը պետք է մնա՝ քանի դեռ գոյություն ունի սոցիալական իրականության հետ կապված վերջին անհատը և ցանկանում է ապրել ազատ ու աշխարհիկ հասարակության մեջ, որովհետև «Լինելու է միայն ընդհանուր Հայրենիք, ոչ միայն քրդերի, այլև հայերի, սիրիացիների, թուրքմենների, արաբների և ազատ ապրել ցանկացող բոլոր անհատականությունների ու մշակույթների համար: Այն, որ այդ Հայրենիքը չի լինելու ազգային-պետական, դա դժբախտություն է, այլ երջանկություն»<sup>38</sup>:

Ստացվում է, որ դեմոկրատական ազգի իդեալի միջոցով մերժելով ազգ-պետության գաղափարը, զուգահեռաբար պահպանվում է «Քրդստան» հասկացությունը, երբ ի տարբերություն հայերի կամ ասորիների, տվյալ տարածքներում քրդերը երբեք ազգային պետականություն չեն ունեցել: Իսկ նման հակասությունը քողարկելու համար գործի է դրվում Մերձավոր-Միջին Արևելքի հնագույն քաղաքակրթության՝ քրդերի հետ ունեցած ժառանգորդական կապի մասին հորինվածքը: Մինչդեռ դեռևս պարզ չէ անգամ, թե դեմոկրատական հասարակության և կոնֆեդերացիայի գաղափարները Ա. Օջալանի Իմրալի կղզում բանտարկված լինելու փաստից բխող հարկադիր ընտրության արդյունք են, թե՞ տարիների փորձով ձեռք բերված համոզումն է...

Բայց բոլոր դեպքերում անհիմն կերպով քրդերին վերագրվող «քաղա-

37 Նույն տեղում, էջ 200:

38 Նույն տեղում, էջ 202:

քակրթական առաքելության» գաղափարն անտեսում է այն իրողությունը, որ սելջուկ թուրքերի մեր տարածաշրջանում հայտնվելու ժամանակներից սկսած, ու մանավանդ՝ օսմանյան սուլթանների օրոք, նրանք վերջիններիս հետ միասին ձեռք-ձեռքի տված իրականացրել են Առաջավոր ասիական հնագույն քաղաքակրթության բեկորներն արմատախիլ անողների գործառույթը՝ Բյուզանդական ու միջնադարյան հայկական մշակութային ժառանգության ոչնչացմանն ուղղված հետևողական քայլերի միջոցով:

Ուրեմն այսօրվանից հարկ է հստակեցնել, թե ո՞րն է քրդերի հանդեպ մեր վերաբերմունքի փոփոխության հարցում հայ գիտական հանրության համար ապացուցողական արժեք ունեցող կոնկրետ իրողությունը. թուրքերի հետ միասին անցյալում նրանց իրականացրած «ընդհանուր գործը», թե՛ մեզ հետ միասին «ընդհանուր ապագա» կերտելու խոստումները: Անշուշտ, ակնհայտ է, որ ժամանակին առաջինները **գործիք** են եղել պետականորեն կազմակերպված թուրքական տարրի ձեռքին, իսկ այժմ ցանկանում են ձերբազատվել նրանից ու վերածվել **գործոնի**: Բայց, եթե գործիքի պարագայում խիստ սահմանափակ է գիտակցությունն ու դրանից բխող կամքը, ապա գործոն դառնալու համար այն պարտադիր պայման է: Մինչդեռ ունենալով տեղի ունեցածի հստակ գիտակցումը, քրդերն այսօր ոչ միայն չեն դրսևորում անհրաժեշտ կամային որակներ ընդունելու տարածաշրջանի քաղաքակրթությունների կործանման մեջ իրենց ունեցած լուրջ դերակատարությունը, այլև փորձում են գլխի վրա շրջել պատմության դիաքրոնիկ ընկալումը ու դառնալ ոչ թե բյուզանդական կամ հայկական մշակույթի ժառանգորդները, այլ Շումերի կամ Ուրարտույի «նախահայրերը»: Հասկանալի է, որ նման «շրջված բուրգի» առկայության պայմաններում մշուշոտ է դառնում ոչ միայն «ընդհանուր ապագայի» երազանքը, այլև համաշխարհային քաղաքակրթության ապագա հողվույթում տեղ ունենալու քրդերի ցանկությունն՝ ընդհանրապես: Որովհետև, եթե քրդերը չգիտեն կամ չեն ցանկանում իմանալ, թե **որտեղից են գալիս**, ապա չեն կարող պատկերացնել, թե **ուր են գնում**:

Մենք՝ հայերս, գիտենք շուրջ հազար տարի մեր տարածաշրջանը օկուպացրած և տեղում այդպես էլ քաղաքակրթություն չստեղծած թուրքերի անցած ուղին և գիտակցում ենք, որ այդ ամենի կրկնության քրդական հավակնությունները որևէ ապագա չունեն մինչ օրս թուրքերի հետ իրենց իրակացրած գործառույթի **նույնականության** պատճառով: Քրդերի համար դա անհնար է կրկնել, քանզի փոխվել է ժամանակը, ուրեմնև պետք է փոխվեն ոչ միայն նրանց պատմական գործառույթների իրականացման ձևերը, այլև բովանդակությունը: **Քրդական «դեմոկրատիան» չի կարող մի կողմից «շումերներում» թաքցնել իր ցեղակիցների շուրջ հազարամյա հակաքաղաքակրթական դերակատարությունը, իսկ մյուս կողմից իր ազգային-պետական իդեալը կառուցել ժողովրդավարական-եվրոպամետ տեսականի վրա, ինչը պահանջում է Հայկական լեռնաշխարհում դարեր շարունակ Հայաստանի ու հայության իրականացրած քաղաքակրթական առաքելության շարունակումը**: Բայց ինչպե՞ս է դա իրականացվելու, երբ բազմազգ դեմոկրատական կոնֆեդերացիայի ստեղծման Ա. Օջալանի ծրագիրը այդպես էլ չի հստակեցնում թե ինչպիսի քաղա-

քակրթական դիմագիծ է ունենալու այդ արհեստական ու անհասկանալի կազմավորումը:

Մինչդեռ ակնհայտ է, որ քրդական պետության ձևավորման արդյունքում սկիզբ է առնելու Հայկական լեռնաշխարհին տիրելու համար թուրք-քրդական պայքարի նոր հանգրվանը: Պատմությունը կրկնվելու է հակառակ հաջորդականությամբ և Հայկական լեռնաշխարհը նորից ամայանալու է ինչպես հեռավոր 1915 թվականին: Ուստի Հայկական հարցը նորից չոքելու է ինչպես քրդերի, այնպես էլ թուրքերի դռան առջև: Ուրեմն, ավելի ճիշտ չէր լինի համատեղ պատմության նոր էջը սկսել ոչ թե նախկին սխալների կրկնությունից, այլ դրանց սրբագրումից: Պարզվում է, որ գոնե՝ առայժմ քրդերն այդպես չեն մտածում:

## 5. Քրդական «դեմոկրատիան» և Հայկական հարցը

Փորձենք հասկանալ, թե ինչպես է պատկերացնում Ա. Օջալանը հայ-քրդական հարաբերությունների ապագան քրդական հարցի լուծման համատեքստում: Այս առումով նրա քաղաքական ծրագիրն ավելի ծավալուն և ամբողջական կերպով ներկայացված է իր երկերի 5-րդ հատորում, որը վերնագրված է «**Քրդական հիմնահարցը և դեմոկրատական ազգի բնորդի իրականացումը**»: Այստեղ իր ղեկավարությամբ ստեղծված ու Թուրքիայի դեմ երկարատև ու արյունալի պատերազմ մղած ՔԲԿ-ի պատմության հանգամանալից շարադրանքը նա բավականին հաճախ ընդմիջում է Հայկական հարցի ու հայ ազգային-ազատագրական պայքարի պատմական փորձի մասին ընդարձակ էքսկուրսներով, որոնք արժանի են ավելի մանրամասն քննության:

Այս առումով հարկավոր է հենց սկզբից արձանագրել, որ Ա. Օջալանի տեղեկությունները Հայաստանի ու հայերի մասին հիմնվում են հիմնականում՝ թուրքական պատմագրության, մասամբ էլ արևմտյան որոշ հեղինակների տեսակետների վրա, որոնք թեև նրա կողմից ենթարկվել են մասնակի խմբագրումների, սակայն չեն կորցրել իրենց միակողմանիությունը: Հնագույն ժամանակներից սկսվող Ա. Օջալանի ծավալուն պատմական էքսկուրսներում գրեթե բացակայում է «Հայաստան» («Արմենիա») հասկացությունը և՛ որպես պետության, և՛ որպես որոշակի աշխարհագրական տարածքի անվանում: Մինչդեռ այն հազարավոր անգամներ օգտագործվել է ոչ միայն անտիկ ու եվրոպական գրականության մեջ ու քարտեզներում, այլև արաբական ու թուրքական աղբյուրներում, որոնց անկասկած, ծանոթ է Ա. Օջալանը: Եվ դա պատահականություն չէ, այլ քրդերի ու Քրդստանի «գենեզիսը» արհեստականորեն «հնացնելու» և մարդկային ողջ քաղաքակրթության ակունքներին մոտեցնելու նպատակադրումի հետևանք:

Ընդ որում՝ հետաքրքրական է, որ այդ ամենը չի խանգարել Ա. Օջալանին՝ արձանագրելու, որ հայկական «Մշակութային տարրերի սինթեզի հիման վրա ձևավորված Ուրարտուի մշակույթը, որոնք ենթադրաբար խուրրիական ծագում ունեին, ներկայացնում էին այն ժամանակների հայերին, դարձավ նշանակալի օղակ՝ քաղաքակրթության կենտրոնական



համակարգում»<sup>39</sup>: Այսինքն՝ Ա. Օջալանը ընդունում է որ հայերը (բայց ոչ Հայաստանը, որպես պետություն) հանդիսանում են իր կողմից մանրամասնորեն ներկայացված՝ Մերձավոր-Միջին արևելքի քաղաքակրթությունների հերթափոխի անմիջական ժառանգորդները: Բայց առաջնորդվելով հայերին Հայաստանից տարանջատելու նպատակադրումով, նա Աքեմենյանների, Ալեքսանդր Մակեդոնացու, Պարթևական թագավորության ու Սասանյանների ողջ պատմության ներկայացման ընթացքում գոնե մեկ անգամ չի օգտագործել «Մեծ Հայք» կամ պարզապես «Արմենիա» հասկացությունները: Իսկ ահա 11-րդ դարից սկսած՝ «քրդական աշխարհագրական տարածությունը» փոխակերպելով Քրդստանի՝ նա անհիմն կերպով եզրակացրել է, որ «Թուրքերը Անատոլիայում առավելություն և մեծամասնություն ունեին կիպրոսյան (թերևս՝ պոնտացի – Գ.Խ.) հույների և մասամբ էլ հայերի հանդեպ: Քրդստանում քրդերը ներկայացնում էին նմանօրինակ մեծամասնություն՝ հայերի և ասորիների համեմատ: Տվյալ պարագայում «ժողովուրդ» հասկացության տակ պետք է ընկալվի բարձր խավերի հեգեմոնիան ժողովրդի կազմում»<sup>40</sup>:

Այս տարօրինակ հնարքի միջոցով «ղեմոկրատական հասարակության» ջատագով Ա. Օջալանը քողարկել է այն պատմական իրողությունը, որ քրդական էթնիկ տարրը շատ թե քիչ շոշափելի տոկոս է կազմել Հայաստանի կենտրոնական՝ Տարոնի ու Վասպուրականի նահանգներում միայն 18-րդ դարի երկրորդ կեսի զանգվածային թափանցումների արդյունքում, իսկ մեծամասնություն՝ միայն Մեծ եղեռնից հետո<sup>41</sup>: Ավելին, այդ տարրը նույնիսկ 19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում չի կարողացել «հեգեմոնիա» ձեռք բերել հայերի հանդեպ: Հիշենք 1890-ականների սկզբին Տարոնում Թահսին փաշայի կազմակերպած սադրանքների արդյունքում իրականություն դարձած՝ հայ-քրդական ընդհարումները, որոնք ավարտվեցին քրդերի 1893 թվականի ջախջախիչ պարտությամբ՝ իրենցից վատ զինված սասունցի լեռնականներից: Եվ միայն 1894-ին քրդերին օգնության հասած թուրքական 4-րդ բանակի իրականացրած ցեղասպանական գործողություններն ապահովեցին նրանց վերադարձը Սասունի լեռներ<sup>42</sup>: **Ուրեմն Արևմտյան Հայաստանի հիմնական նահանգներում քրդերի հաստատած «հեգեմոնիան» միայն ու միայն Հայոց ցեղասպանության արդյունքն է՝ դրանից բխող քաղաքական պատասխանատվությամբ հանդերձ:**

Իսկ ինչ մնում է Հարավային ու Հարավարևմտյան Հայաստանի տարածքների ավելի վաղ յուրացման իրողությանը, ապա չպետք է մոռանալ, որ դրանք ձեռք են բերվել ասորիների զանգվածային կոտորածների ու դուրսմղման արդյունքում: Մինչ այդ երկու ժողովուրդները այստեղ ևս գումարային առումով գերազանցել են մահմեդական լինելու պատճառով նրանց կոտորելու արտոնություն ստացած քրդերին:

39 Նույն տեղում, էջ 115-116:

40 Նույն տեղում, էջ 146:

41 Ավելի մանրամասն տես **Գեղամ Մ. Բաղայան**, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին..., «ՎԷՄ», 2016-2017 թթ.:

42 Ավելի մանրամասն տես **Գևորգ Ս. Խուդինյան**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Եր., 2005, էջ 302-310:

Տարօրինակ է սակայն, որ հարևանին պատկանող տարածքների հանդեպ նման ակնհայտ հավակնությունները չեն խանգարել Ա. Օջալանին խիստ բարձր գնահատելու Հայ եկեղեցու մշակութաստեղծ գործունեությունը՝ վաղ միջնադարից սկսած: Ա. Օջալանը կարևորել է նաև իր գործունեության լայն աշխարհագրությամբ տարածաշրջանի մյուս ժողովուրդներին զգալիորեն գերազանցած հայ առևտրական կապիտալի դերը համաշխարհային առևտրում: Սակայն դրա հետ միասին նա պնդում է, որ եվրոպական կապիտալի ազդեցությամբ հայ բուրժուազիան սխալմամբ տարվել էր ազգային պետականության վերականգնման երազանքով, մինչդեռ հին նստակյաց ժողովուրդ լինելով հանդերձ՝ «քանակի և միատարրության առումով հայերը խոցելի են»<sup>43</sup>:

Ավելին առանց տեղեկանալու պատմական փաստերին՝ Ա. Օջալանը կարծում է, որ հայերը պետք է առաջնորդվեին Օսմանյան կայսրությանը ֆեդերատիվ կառուցվածք հաղորդելու համադեմոկրատական տեսլականով և 1914 թվականի նախօրեին ու պատերազմի առաջին տարում չառաջադրեին սեփական անկախ պետության վերականգնման պահանջը: Այդ պատճառով «Միություն և առաջադիմություն» կուսակցության 1915 թ. ապրիլի 24-ի որոշմամբ «իրականացվեց հակահարձակում և նրանք արտաքսվեցին հայրենի հողերից, որտեղ ապրում էին հազարամյակներ շարունակ»<sup>44</sup>:

Մասամբ՝ թուրք կեղծարարների, մասամբ էլ 1920-1930-ական թվականների խորհրդային պատմագրության հայտնի հեղուրանքները կրկնելու միջոցով Ա. Օջալանն անտեսում է այն իրողությունը, որ իր կողմից նեղ ազգայնականության մեջ մեղադրվող՝ հայ քաղաքական շրջանակներն, ու մանավանդ նրանց առաջնորդող ՀՅ Դաշնակցությունը դեռևս 1907 թվականին ընդունված ծրագրով որդեգրել էր հենց Օսմանյան կայսրությանը ֆեդերատիվ կառուցվածք հաղորդելու նպատակադրումը: Առաջին աշխարհամարտի նախօրեին մեծ տերությունների նախաձեռնությամբ ընդունված բարենորոգումների ծրագրի հիմքում նույնպես դրված էր հենց նման պետական կարգի հաստատման խնդիրը:

**Այսինքն՝ այն ծրագիրը, որն այսօր առաջարկում է իրականացնել Ա. Օջալանը՝ նպատակ ունենալով ժողովրդավարական ու ֆեդերատիվ հիմունքներով բարեփոխել Թուրքիան, փաստորեն կրկնում է 20-րդ դարասկզբին ՀՅԴ-ի որդեգրած ծրագրային նպատակները: Ու քանի որ դրանք չեն ազատել հայերին ցեղասպանությունից, ապա գոյություն են ունեցել այլ՝ ավելի խորքային պատճառներ, որոնց իմացությունը ներկայումս չէր խանգարի նաև իրենց՝ քրդերին:**

Մինչդեռ հարևանի անցած ուղին ուսումնասիրելու և դասեր քաղելու փոխարեն Ա. Օջալանը փորձում է գտնել օսմանյան իշխանությունների հակահայ գործողություններում քրդերի զանգվածային մասնակցությունն արդարացնող կեղծ պատճառաբանություններ: Օրինակ՝ խոսելով 1890-ականների համիդիե գնդերի ձևավորման պատճառների մասին, նա պնդում է, թե իբր՝ հայ ազգայնականները «Քրդստանը, որը հարկ էր համարել

43 **Абдулла Оджалан.** Курдская проблема и решение модели демократической нации. Кн. 5, М. 2015, с. 167.

44 Նույն տեղում, էջ 169:



իրականացրած արբիտրաժի արդյունքերը, որոնք այսօր էլ օրենքի ուժ ունեն: Ուրեմն՝ միջազգային-իրավական առումով **Հայաստանը** հայտնի է ամենքին, անկախ նրանից՝ Սևրի չիրականացված պայմանագրով է այն հիմնավորվում, թե իր իրավական ուժը պահպանած՝ Վ. Վիլսոնի վճռով: Եվ եթե հայերիս պատմական հայրենիքի եռատումը 20-րդ դարասկզբին բավարար չէր Թուրքիայի կայսերական հավակնությունների, իսկ դարավերջին՝ «Միացյալ և անկախ Քրդստանի» պահանջի դիտանկյունից, ապա դա չի նշանակում, որ հայերը նույնպես կայսերական հավակնություններ ունեն:

Ընդհակառակը, Հայոց ցեղասպանությունից հետո անցած ողջ հարյուրամյակի ընթացքում Արևմտյան Հայաստանի տարածքում առաջ եկած **դեմոգրաֆիական վակուումը** լցնելու ցանկությունը պատճառ է դարձել նոր ողբերգության, այս անգամ՝ **ցեղասպանների ցեղասպանության** համար: 1920-1930-ականների քրդական ապստամբությունների շրջանում երկու ժողովուրդներն այնքան են կոտորել մեկը մյուսին, որ Արևմտյան Հայաստանի տարածքների մեծ մասում թուրքական տարրը գրեթե բնաջնջվել է կամ հեռացել այլ վայրեր, իսկ ինչ մնում է քրդերին, ապա նրանց էլ թուրքական զորքերն են կոտորել կամ վերաբնակեցրել արևմտյան վիլայեթներում:

Մրախողխող արված անմեղ հայ կանանց ու երեխաների մեկդարյա անեծքը շարունակում է հավասարապես կախված մնալ թուրք և քուրդ ժողովուրդների գլխին, որոնք, իրենք էլ դա չնկատելով, աննկատ կերպով հայտնվել են նույն հանցագործությունն իրար դեմ գործելու՝ պարբերական շրջափուլերի մեջ, բայց ահա դրանից հետո էլ շարունակում են անհիմն արդարացումներ փնտրել իրենց արարքների համար:

Մինչդեռ այն նույն հեգեմոնիստական ուժերը, որոնցից այդքան սարսափում է Ա. Օջալանը, այսօր առանց իրեն հարցնելու ստեղծում են տարածաշրջանային հենակետ՝ ի դեմս փոքր կամ իրաքյան Քրդստանի: Իսկ դա նշանակում է, որ շուտով միջազգային քաղաքականության օրակարգ է վերադառնալու նաև մյուս քրդաբնակ տարածքների ճակատագրի հարցը, և ցեղասպանների ցեղասպանության մատակցի թափանիվը նոր պտույտներ է գործելու...

Ավաճից կարելի է հանգել հետևյալ նախնական եզրահանգմանը. նոր ցնցումների առջև կանգնած մեր տարածաշրջանում դեռևս չի լուծվել **Հայրենիքի հարցը**, ուստի չպետք է զարմանալ, որ նրանում բնակվող քրդերը նույնպես իրենց հավակնություններն են դրսևորում: Սակայն նրանց կողմից առաջադրվող դեմոկրատական ազգի գաղափարն ու դրա շրջագծում «Դեմոկրատական կոնֆեդերատիվ Քրդստանի» ստեղծման տեսլականը հիմնովին անտեսում են այն խորքային հակասությունները, որոնք կուտակվել են Մերձավոր-Միջին Արևելքի շուրջ գլոբալ, տարածաշրջանային, միջկրոնական ու միջէթնիկական մակարդակներում: Ուստի եթե անգամ առաջիկայում հենց իրենք՝ գերուժերը, փորձեն գտնել ժողովուրդների հաշտեցման ուղիներ, ապա ճիշտ այնպես ինչպես 1912-1914 թթ. բանակցված և ընդունված ինքնավար Արևմտյան Հայաստանի նախագծի դեպքում, ճանապարհ կբացեն ցեղասպանների ցեղասպանության նոր հանգրվանի համար:

Մերձավոր-միջինարևելյան տարածաշրջանը հետևողականորեն ներքաշվում է համընդհանուր քառսի մեջ, որի առանցքում հայտնվել է «սառը պատերազմի» դարաշրջանում Արևմուտքի կողմից նրա ժամանակավոր կայունության հիմքի վերածված Թուրքիան: Արևմուտքի կայունացվող գործառույթի փոփոխության արդյունքում շուտով օրակարգային են դառնալու ոչ միայն Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանները ձևավորած խորհրդաթուրքական հայտնի պայմանագրերը, այլև Սևր-Լոզանյան համաձայնագրերը հակառակ հաջորդականությամբ վերաքննելու հարցը: Լոզանն իր տեղը գիջելու է Սևրին, սակայն վերջինիս «ներքին բովանդակությունը» պայմանավորվելու է տարածաշրջանի ժողովուրդներից յուրաքանչյուրի կենսունակության աստիճանով:

### Եզրակացություններ

- Ա. Օջալանի աշխատությունների հինգ հատորների ներկա համառոտ գրախոսությունը կամ ավելի ձիշտ՝ ընդհանուր տեսությունը, նպատակ ունենալով հայ ընթերցողին ներկայացնել մեր տարածաշրջանի անցյալի, ներկայի ու ապագայի վերաբերյալ **քրդական տեսակետի** առավել համակարգված ու ամբողջական շարադրանքը, որն առկա է այդ ժողովրդի բազմամյա գինյալ պայքարի առաջնորդի աշխատություններում, քանզի արտաքուստ գրված լինելով որպես պաշտպանական ճառի ընդարձակ հավելումներ՝ իրականում դրանք քուրդ ժողովրդի հավակնությունների գիտաքաղաքական հիմնավորումներն են:

- Ա. Օջալանի հարուստ գիտելիքներն ու ազգային խնդիրներին համարող կային լուծումներ գտնելու նպատակադրումը ցույց են տալիս, որ ի դեմս հսկայական ինտելեկտուալ առաջընթաց արձանագրած քրդերի առաջնորդի՝ մենք գործ ունենք հասարակական գիտությունների նվաճումներին հաղորդակից ու միևնույն ժամանակ՝ համաշխարհային քաղաքականության ետնախորքում ծավալվող գործընթացներին քաջատեղյակ ազգային գործչի զարմանալիորեն ներդաշնակ կերպարի հետ:

- Առաջնորդվելով գիտական ճշմարտության որոնման հավակնոտ նպատակադրումով՝ Ա. Օջալանը, մեթոդ կամ մեթոդիկա ասելով, հասկանում է ոչ միայն իր գիտական պրպտումների միջոցը կամ գործիքը, այլև այն հիմնավորող տեսությունը: Մեթոդի նման լայն ընկալումն ամենևին էլ նորություն չէ, սակայն այն արդյունավորվում է միայն հիմնարար գիտական պատկերացումների, այսինքն՝ տեսության համատեքստում: Մինչդեռ Ա. Օջալանը, նախապես թիրախավորելով Նոր ժամանակների համար առանցքային՝ մարդու սուբյեկտիվության և գոյություն ունեցող հասարակության օբյեկտիվության մասին հարցադրումները, իր հետագա շարադրանքում դրանք դարձնում է «կապիտալիստական մոդեռնիզմի» ծնունդ ազգ-պետության գաղափարի քննադատության գործիքներ, մոռանալով, որ համաշխարհային գիտությունը վաղուց հաղթահարել է օբյեկտ-սուբյեկտ հարաբերակցության նման պարզունակ ընկալումը: Ուստի Ա. Օջալան-մտածողի աներևակայելի թռիչքը՝ մարքսիզմից դեպի հետարդիականության դարաշրջանի ինտելեկտուալ նվաճումները, հանգեցրել է նեղ

առունով՝ մեթոդի և լայն առունով նրա մի մասը կազմող՝ գիտական տեսության միջև լուրջ հակասության ձևավորմանը: Այդ պատճառով դեմոկրատական ազգի քաղաքական իդեալի համար անհրաժեշտ՝ բարու, գեղեցիկի, ազատության ու ճշմարտության չափանիշներով առաջնորվող մարդակենտրոն մտածողությունը նա փաստորեն նույնացրել է իր կողմից մերժվող՝ սուբյեկտիվ իդեալիզմի մարքս-լենինյան ընկալման հետ:

- «Քաղաքակրթություն» եզրույթի միանգամայն գիտական սահմանման հիման վրա ներկայացնելով Մերձավոր-Միջին արևելյան հին կամ համադրական քաղաքակրթության և նրա առանձին բաղկացուցիչ-քաղաքակրթությունների հերթափոխը, Ա. Օջալանը օգտագործում է քրդերի ներկա բնակության վայրերի ու «Քարերեր կիսալուսնի» հիմքը կազմած Տավրոս-Ջագրոսյան աղեղի աշխարհագրական կոորդինատների համապատասխանության փաստը՝ Առանցքային ժամանակում հայտնի ժողովուրդների՝ ասորիների, հայերի, հույների, հրեաների և պարսիկների կողքին քրդերի անունն ավելացնելու համար: Նման փորձերը հիմնվում են «քուրդ» էթնիկ անվանմանը մոտ զանազան պատմական ցեղանունների ու տեղանունների հետ տարվող բառախաղերի վրա: Դրանով Ա. Օջալանը հիմնավորապես աղավաղել է նաև իր կողմից բազմիցս ցիտվող՝ Ֆ. Բրոդելի դրույթները՝ **պատմական ժամանակ** հասկացության և քաղաքակրթությունների պատմության գնահատման համար անհրաժեշտ ժամանակային չափույթի՝ **longue durée**-ի մասին:

- Ա. Օջալանի աշխատությունների երկրորդ հատորում՝ «Կապիտալիստական քաղաքակրթություն», փորձ է արվում կապիտալիզմը դիտարկել որպես մի Համակարգ, որը ձևավորվել է ապրանքա-դրամական հարաբերությունների և քաղաքի ու պետության ստեղծման հետ միասին: Նրա կարծիքով դա հանդիսանում է հասարակության բոլոր դժբախտությունների պատճառ «պետական քաղաքակրթության» հոմանիշը, որին հեղինակը հակադրում է «դեմոկրատական քաղաքակրթության» իր տեսլականը: Դրանով Ա. Օջալանը փաստորեն նույնականացնում է քաղաքակրթությունն ու հասարակարգը, ինչը թույլ է տալիս քաղաքակրթական բովանդակություն հաղարդել կապիտալիզմի դեմ պայքարին, որը նրա պնդմամբ՝ իր երեք ինդուստրիաների (սեքս, սպորտ և շոու) միջոցով կրկնում է ցուցադրական հասարակության կառուցման հիտլերյան փորձը:

- Անշուշտ, ուշարժան է ժամանակակից դեմոկրատիայի ինստիտուտների վերակառուցման երեք՝ ինտելեկտուալ, բարոյական և քաղաքական ասպեկտների մասին Ա. Օջալանի ուսմունքը: Դեմոկրատական քաղաքակրթության կառուցման առանցքային խնդիրը Ա. Օջալանը համարում է ազգերին համախմբող քաղաքական և դեմոկրատական կոնֆեդերացիայի ձևավորումը, որը նրա կարծիքով՝ ցեղասպանությունների դուռը բացող միատարր ազգ-պետության բնորդի հաղթահարման միակ ուղին է:

- Մակայն համայնական կարգի ու տոհմացեղային հարաբերությունների մեջ դեմոկրատիայի սաղմեր փնտրող Ա. Օջալանի նման երազանքը ակնհայտորեն հակասում է պետության կոնֆեդերատիվ կառույցվածքը ազգային հարցի լուծման համաբալասանի վերածելու իր ցանկությանը, որովհետև քրդերից բացի նման նախնադարյան իդեալով կարող են առաջ-



ցելով դեմոկրատական հասարակության կառուցման պարտադիր պայմանը՝ Հայոց ցեղասպանության իրականացման գործում ոչ միայն Թուրքիայի ու թուրք ժողովրդի, այլև իր ժողովրդի պատասխանատվությունն ընդունելու անհրաժեշտությունը:

- Ազգ-պետության բնորոշ դեմոկրատական ազգի կոնցեպտով փոխարինելով՝ Ա. Օջալանն ու «Ժողովուրդների Դեմոկրատական կուսակցության» գծով նրա զինակիցներն իրականում ցանկանում են քողարկել այն իրողությունը, որ ազգերի ինքնորոշման դեմոկրատական սկզբունքի հիման վրա 20-րդ դարասկզբի մեծագույն դեմոկրատը՝ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնն արդեն իսկ իրականացրել է հայկական պատմական հողերի հիրավի եղբայրական բաժանումը հայերի, թուրքերի ու քրդերի միջև և համապատասխան քարտեզով ամրագրել է միջազգային մանդատի հիման վրա իր կատարած արբիտրաժի արդյունքները:

- Ուրեմն՝ անկախ նրանից, թե Սևրի առայժմ չիրականացված պայմանագրով է հիմնավորվում այդ իրողությունը, թե իր իրավական ուժը պահպանած նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռով, դա եղել է դեմոկրատիայի մեծագույն հաղթանակը մեր տարածաշրջանում, որը ժամանակավորապես կասեցվել է Թուրքիայի ու Ռուսաստանի կայսերապետական հավակնությունների վերածննդի արդյունքում, ուստի ապագայում չի կարող փոխարինվել ո՛չ «Միացյալ և անկախ Քրդստան»-ով և ո՛չ էլ՝ վերջինիս շղարշի դերը խաղացող՝ «Դեմոկրատական կոնֆեդերատիվ Քրդստանի» տեսլականով: Որովհետև ինչպես անցյալում, այնպես էլ այսօր թուրքերին, քրդերին և հայերին դեմոկրատական ֆեդերացիաների կամ կոնֆեդերացիաների ներսում «հաշտեցնելու» նախագծերը ընդհանուր մշակութային-քաղաքակրթական հիմք չունեն: Ընդհակառակը, դրանք անցյալում բացել ու այսօր էլ բացում են նոր ցեղասպանությունների ճանապարհ:

- Ավելին, քուրդ ժողովուրդը, որը դեռևս անկախ պետություն չի ստեղծել և չի դարձել պատմության լիարժեք սուբյեկտ, չի կարող հավակնել բազմազգ-ժողովրդավարական պետության ձևավորման պատմական առաքելությանը: Ուստի նոր միայն պետականորեն կազմակերպվելու հայտ ներկայացնող քրդերը ու հազարամյակների քաղաքակրթական ավանդույթներ ունեցող հայությունը կարող են բարիդրացիական հարաբերություններ հաստատել միջազգային պայմանագրերում ու փաստաթղթերում արդեն իսկ ամրագրված՝ փոխադարձ իրավունքների ճանաչման հիման վրա:

**Ավարտելով** Ա. Օջալանի երկերի հինգ հատորների քննությունը, ընթերցողների ուշադրությունը հրավիրում ենք մեր հրապարակման առաջին էջում առկա երկու ձևակերպումների վրա, որոնք **բանալիների** դեր են խաղացել ներկա ուսումնասիրության համար: **Առաջինը** «Քրդերը և համաշխարհային պատմությունը» վերնագրի զույգ բաղադրիչների հստակ տարանջատման իրողությունն է, ինչը վկայում է, որ քրդերի ներկա մուտքը համաշխարհային քաղաքականություն դեռևս չի նշանակում, որ նրանք համաշխարհային պատմության անքակտելի մասն են դարձել: **Երկրորդն**՝ իբրև ներկա հրապարակման բնաբան ընտրված՝ Ա. Օջալանի հայտնի սրամտությունն է՝ քրդերի կողմից պետություն ձեռք բերելու անթույլատրե-



լիության մասին: Առաջիկայում այն կարող է վերածվել չար կատակի, եթե համաշխարհային պատմության շքամուտքին կանգնած 40 միլիոնանոց քուրդ ժողովուրդը չգիտակցի, որ իր առջև դրված անկախ պետություն ստեղծելու արգելքը կարող է հաղթահարել **քանակական** գործոնը քաղաքակրթական **որակների** հետ համադրելու ճանապարհով: Իսկ դա հնարավոր է միայն Հայկական լեռնաշխարհում հայկական քաղաքակրթության անխուսափելի վերածննդին զուգահեռվելու և նրա նվաճումները ստեղծագործաբար յուրացնելու միջոցով: Որովհետև տարածաշրջանում Հայաստան-Քրդստան **իրավահավասար գործակցությամբ** շահագրգիռ միակ ազգը հայերն են՝ պայմանով, որ այն չվերածվի Ա. Օջալանի բռնապաշարում առկա «հեգեմոնիզմ» հասկացության նոր դրսևորման: Մնացած բոլոր դեպքերում քրդերը հավասար գործընկերների փոխարեն՝ վերածվելու են պարզ գործիքների և օգտագործվելու են տարածաշրջանում ու նրանից դուրս գտնվող գերուժերի կողմից՝ որպես առկա աշխարհաքաղաքական ցանկապատները «քանդող բրիգադ», որը զուրկ է հնի վերանորոգման կամ նորի կառուցման **կրեատիվ գործառույթներից**:

**Գևորգ Ս. Խուդինյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց Նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև Հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Summary

**KURDS AND WORLD HISTORY**  
In five volumes of Abdullah Öcalan’s works

Gevorg S. Khoudinyan

**Key words** – Abdullah Öcalan, defense speech, civilization, capitalism, democratic society, democratic nation, United and independent Kurdistan, Democratic confederate Kurdistan, W. Wilson’s arbitral award.

The five volumes of Abdullah Öcalan’s works that are published in Russian in Moscow in 2011–2015 are written as extensive arguments of his defense speech in the Turkish court, but in fact they are scientific and political justifications for the political claims of Kurdish people. The rich knowledge and desire to find universal solutions to national problems show that in the person of A. Öcalan, who has achieved great intellectual progress of the Kurdish people, we are dealing with a surprisingly harmonious image of the national figure.

In the first volume of his works, representing the alternation of the cradle of Near-Middle Eastern civilizations and separate civilizations that emerged from Göbekli-Tepe-Portasar (not far from his native Urfa), Öcalan uses the fact that the geographical

coordinates of the Taurus-Zagros arc as «Fertile Crescent» base correspond to the current places of residence of the Kurds and reckons them among a number of famous peoples of the Axis time, such as Assyrians, Armenians, Greeks, Jews or Persians. Thus, he repeats the groundless attempts of some Kurdish authors who make such judgments based on the play of words with historical tribes and toponyms that are close to the word «Kurd». This he distorts the fundamental principles of F. Braudel, whom he repeatedly quoted. The Brodelian notions of historical times and the «longue durée», necessary for assessing the history of civilizations, are completely distorted.

In the second volume of A. Öcalan's works «Capitalist civilization» an attempt was made to overcome the Marxist perception of this concept and to view capitalism as a System that was formed along with commodity-money relations, and then together with the city and the state. Thanks to this, Öcalan identifies civilization and the social system, which allows him to give some civilizational essence to the struggle against capitalism, which he believes repeats the Hitler experience of creating an indicative society through his three branches (sex, sport and show).

In the third volume of his works A. Öcalan sees the solution of the fundamental problem of building a democratic civilization in the formation of political and democratic confederations to unite nations, which, in his opinion, is the only way to overcome homogeneous nation-states that are not alien to genocides and other state crimes.

In his fourth volume entitled «The Crisis of Civilization in the Near and Middle East» A. Öcalan passes to the problems of the region where he was born and fought for the solution of the Kurdish problem. Here he tries to gently transform the fact of the correspondence of modern geographic coordinates of the Kurds settlements with the cradle of ancient civilizations and turn it into the idea of the Kurdish homeland. To do this, he again and again creates unreasonable, absolutely fictitious and unscientific parallels between Sumerians and Hurrites and the Kurds now living on this territory.

The Öcalan program on the solution of the Kurdish question is more extensively presented in the fifth volume entitled «The Kurdish Question and the Implementation of the Democratic Model of the Nation». Although Öcalan considers Armenians to be a direct and immediate heir of Urartu culture, but in his vast historical digression the concept of «Armenia» is almost absent, And from the 11th century, when the Seljuks appear, he immediately replaces Armenia with the non-existent «Kurdistan». He stubbornly avoids answering one elementary question – which state existed in these territories for two thousand years after the fall of Urartu.

In the issue of assessing the causes of the Armenian Genocide, Öcalan partially repeats the statements of Marxist historians about the «expansionist goals» of the Armenian bourgeoisie as a result of the early development of capitalism among the Armenians. He also partially repeats the thesis about the «Turkish rebuff», invented by Turkish historiography, on the Armenian demand for independent statehood on the eve of the First World War. By transforming the internationally recognized (in 1914) problem of implementing reforms in Western Armenia in «Armenian separatism», he bypasses the issue of the responsibility of the Kurds for the Armenian Genocide. Meanwhile, the recognition of the Armenian Genocide and the responsibility for it not only of Turkey as a state, but also of the Turkish and partly Kurdish people who directly and voluntarily participated in this bacchanalia, is the only way to build a democratic society in our region.

Moreover, based on the ideas of a democratic society and democratic nation (which were discussed by A.Öcalan), the greatest democrat of the first decade of the 20th century – US President Woodrow Wilson, on November 22, 1920 has already made a true fraternal division of Armenian historical lands between Armenians, Turks and Kurds and the results of his arbitral award are fixed on the corresponding map on the

basis of the international mandate. According to this arbitration, Armenians do not get «Great Armenia», as the Turkish falsifiers of history say, but only a third of their historical lands.

And irrespective of whether this division comes from the San Remo conference decisions, from the Treaty of Sevres or Woodrow Wilson's arbitration, which retained its legal force, it was the greatest victory of democracy in our region, which was only temporarily suspended by the joint efforts of the Kemalists and the Bolsheviks. These decisions of the international community have nothing to do with the neo-imperial program of the United and Independent Kurdistan or the Democratic Confederate Kurdistan, which is the cover of the first. Because the creation of the Great Kurdistan instead of Turkey is not part of the plans of world powers.

## Резюме

### КУРДЫ И МИРОВАЯ ИСТОРИЯ

В пяти томах сочинений Абдуллы Оджалана

Геворк С. Худинян

**Ключевые слова** – Абдулла Оджалан, защитная речь, цивилизация, капитализм, демократическое общество, демократическая нация, Объединенный и независимый Курдистан, Демократический конфедеративный Курдистан, арбитражное решение В. Вильсона.

Пять томов сочинений Абдуллы Оджалана, опубликованных в русском переводе в Москве в 2011–2015 гг. написаны в качестве обширных аргументов его защитной речи в турецком суде. Но на самом деле они являются научно-политическими обоснованиями претензий курдского народа. Богатые знания и стремление найти универсальные решения национальных проблем показывают, что в лице А. Оджалана мы имеем дело с удивительно гармоничным образом национального деятеля–достигшего значительного интеллектуального прогресса курдского народа.

В **первом томе** своих трудов представляя чередование возникшей с Гебекли–Тепе–Портасара (недалеко от его родной Урфы) колыбели Ближне–Средневосточных цивилизаций и отдельных цивилизаций ставших ее продолжением, А. Оджалан использует факт соответствия географических координатов Тавр–Загросской дуги как основы «Плодородного полумесяца», и нынешних мест проживания курдов, чтобы причислить их к ряду известных народов Осевого времени, таких как ассирийцы, армяне, греки, евреи или персы. Таким образом, он повторяет беспочвенные попытки некоторых курдских авторов, которые высказывают подобные суждения основываясь на игре слов с названиями древних племен и топонимов, чьи наименования близки к слову «курд». Этим А. Оджалан игнорирует фундаментальные положения Ф. Броделя, которого он многократно цитировал. В частности полностью искажаются броделевские представления об историческом времени и о «longue durée», необходимого для оценки истории цивилизаций.

Во **втором томе** сочинений А. Оджалана под названием «Капиталистическая цивилизация» сделана попытка преодолеть марксистское восприятие этого понятия и рассматривать капитализм как Систему, которая сформировалась вместе с возникновением товарно–денежных отношений, города и государства. Благодаря этому А. Оджалан осуществляет фактическое отождествление цивилизации и общественного строя, что позволяет ему придать цивилизационную сущность

процессу борьбы против капитализма. Последний по его убеждению повторяет гитлеровский опыт создания показного общества через свои три театрализованные представления (секс, спорт и шоу).

В **третьем томе** своих произведений А. Оджалан видит решение проблемы построения демократической цивилизации в формировании политических и демократических конфедераций объединяющих нации, что, по его мнению, является единственным способом преодоления однородных государств–наций, которым не чужды геноциды и другие государственные преступления.

А. Оджалан в своем **четвертом томе** «Кризис цивилизации на Ближнем и Среднем Востоке» переходит к проблемам того региона, где он родился и боролся за решение курдской проблемы. Здесь он пытается мягко трансформировать факт соответствия современных географических координат проживания курдов с колыбелью древних цивилизаций и превратить это в представление о курдской родине. Для этого он вновь и вновь создает необоснованные, абсолютно выдуманные и антинаучные параллели между шумерами и хурритами и проживающими ныне на этой территории курдами.

Программа Оджалана по решению курдского вопроса более обширно представлена в **пятом томе** под названием «Курдский вопрос и реализация демократической модели нации».

Хотя А. Оджалан считает армян прямыми и непосредственными наследниками культуры Урарту, но в его обширном историческом экскурсе, который начинается с древних времен, понятие «Армения» почти отсутствует. А с 11-го века, когда появляются сельджуки, он сразу заменяет Армению несуществующим «Курдистаном». Этим А. Оджалан упорно избегает от ответа на элементарный вопрос – какое государство существовало на этих территориях после падения Урарту.

В вопросе оценки причин Геноцида армян А. Оджалан частично повторяет утверждения историков–марксистов 1920–1930 гг. об «экспансионистских целях» армянской буржуазии в результате раннего развития капитализма у армян. От части он повторяет и выдуманный турецкой историографией тезис об «турецком отпоре» на армянское требование независимой государственности накануне и в начале Первой мировой войны. Превращая международно–признанную в 1914 году проблему осуществления реформ в Западной Армении в «армяникий сепаратизм», он пытается обходить неоспоримый факт ответственности курдов за Геноцид армян. Между тем признание Геноцида армян и ответственности за него не только Турции как государства, но и турецкого и курдского народов, это единственный путь к построению демократического общества в нашем регионе.

Более того – на основе тех же идей демократического общества и демократической нации, о которых говорит А. Оджалан, величайший демократ первых десятилетий 20-го века – президент США Вудро Вильсон 22 ноября 1920 года осуществил поистине братское разделение армянских исторических земель между армянами, турками и курдами и соответствующей картой закрепил результаты арбитража на основе международного мандата. По этому арбитражу армяне получают не «Великую Армению», как утверждают турецкие фальсификаторы истории, а лишь треть своих исторических земель. И независимо от того, исходит данный раздел из решений конференции в Сан-Ремо, от Севрского договора или арбитража Вудро Вильсона, который сохранил свою юридическую силу, это было величайшей победой демократии в нашем регионе, которая лишь временно приостановлена объединенными усилиями кемалистов и большевиков. Данные решения международного сообщества не имеют ничего общего с неоимперской программой Объединенного и Независимого Курдистана или Демократического Конфедеративного Курдистана, который является мягким прикрытием первому. Потому что создание вместо Великой Турции – Великого Курдистана не входит в планы мировых держав.